Ազգ
Azg
15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 184(4802)
ISSN: 1829-1651

# Հայաստանի նախագահը ոչ պաշտոնական այց կկատարի Ռուսաստան

**Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը պատրաստվում է պետական այց կատարել Ռուսաստանի Դաշնություն: Այցի նախապատրաստական աշխատանքների ընթացքը քննարկել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն իր ռուսաստանցի գործընկեր Սերգեյ Լավրովի հետ:**

**Ինչպես տեղեկացնում է Հայաստանի արտգործնախարարությունը, հանդիպումը տեղի է ունեցել երեկ, Մոսկվայում: Հանդիպման մասին այլ մանրամասներ չեն հայտնվում, ինչպես նաեւ չեն նշվում ժամկետներ, թե երբ է Սերժ Սարգսյանը այցելելու Մոսկվա:**

**Ամեն դեպքում, պետական ու աշխատանքային հայ-ռուսական հաճախակի այցելությունները հաստատապես վկայում են այդ շփումների բարձր մակարդակի մասին, մինչդեռ ադրբեջանցիները ռուս-հայկական հարաբերությունները փորձում են ներկայացնել որպես «տարածաշրջանում անկայունության պատճառ»:**

**Այսպիսի գնահատականին անհամաձայնություն է հայտնել Ռուսաստանի ԱԳՆ հատուկ ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչը. «Ռուսաստանը մեծապես շահագրգիռ է տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանմամբ: Այդ մոտեցումից ելնելով էլ, ըստ գերակայության, կառուցվում են հարաբերությունները և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի հետ: Նույն մղումն էլ ընկած է ղարաբաղյան խնդրի կարգավորմանը նպաստելու մեր ջանքերի հիմքում»:**

**Ա. Հ.**

# Բանակի գլխավոր արժեքը զինվորի կյանքն է

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**



Վերջին օրերին բոլորիս սիրտը ցավեցրին զինվորների մահվան բոթերը բանակում: Ոչ մեկն անտարբեր չմնաց այդ մահերին՝ մի մասն այդ առթիվ հայհոյում է երկիրն ու նրա ղեկավարությանը, մյուս մասը փնտրում օբյեկտիվ պատճառներ՝ բանակում առկա ագրեսիվությունը պրոյեկտելով հասարակության մեջ առկա ագրեսիվությունից: Հիշեցին նաեւ հեռուստատեսությամբ ամեն օր ցուցադրվող սերիալներում առկա գողական բարքերի գործած ավերը եւ փողի վրա կառուցված մեր հասարակական հարաբերությունները անհոգի եւ անարժեք ճնշումը, մարդկանց նկարագրի վրա: Եղան այս մահերը քաղաքականացնողներ, անգամ զոհված զինվորների անունները 2008 թվականի մարտի 1-ի զոհերի կողքին դնողներ, ինչպես ասում են, ամեն մեկն իր պատկերով եւ նմանությամբ անամոք ցավի վրայով անցավ:

Իմ գործընկեր Հովիկ Աֆյանը, որպես նախկին զինծառայող, ամեն ինչին նայում է ներքեւից՝ հասարակ զինվորի աչքերով եւ դաստիարակչական ապտակը ընդունելի չի համարում՝ սխալներն ուղղելուն նպաստելու եւ զինվորական գործը սովորելու տեսակետից, նշելով, որ անձնական հարաբերությունները զինվորների միջեւ միշտ չէ, որ կարող է սպան վերահսկել: Ես պատահածին նայում եմ մոր նման, որ ողջ ու առողջ, ամեն ինչը տեղն իր զավակին ուղարկում է բանակ եւ ուզում է առողջ եւ չծեծված էլ հետ ստանալ՝ ամենեւին այս պարագան որպես միակողմանի պահանջ չուղղելով բանակին, այլ՝ երկիր պահելու ջանքերին զուգահեռելով նաեւ ծնողի իր արդար ցանկությունը: Այս երկու մոտեցումները բանակի դեպքում միահյուսվեն պիտի եւ դրական ելքի երեւույթն ունենան, որպեսզի այսպիսի արդյունք չլիներ այսօր: Մինչդեռ օր օրի բանակում ավելացող մահվան դեպքերը արդեն ոչ թե բանակային վիճակագրություն են պարզապես, այլ բանակի ղեկավարության, գեներալիտետի, միջին սպայակազմի՝ իրավիճակին չտիրապետելու մասին վկայություն, փաստաթուղթը: Մեկ օր առաջ վերջին օրերին արդեն երրորդ մահվան դեպքի մասին իմացանք՝ Իջեւանի զորամասում մահացել է 21-ամյա շարքային, երեւանցի Արամ Մելքոնյանը. ըստ լուրերի՝ զենքը մաքրելիս անզգուշությամբ կրակել է իր վրա: 5 օրվա մեջ երրորդ մահվան դեպքը բանակում, ընդ որում հենց սկզբից, կարելի է ասել, ակնթարթային արագությամբ պաշտոնապես ինքնասպանության վարկածն է կցվում լուրի պոչին: Արամ Մելքոնյանը զոհվել է հոկտեմբերի 13-ին, ժամը 15-ի սահմաններում: Հոկտեմբերի 12-ին, ժամը 12:40-ի սահմաններում Մատաղիսի զորամասի դիրքում իրեն ամրակցված զենքով ինքնասպանություն է գործել Խարբերդից 19-ամյա զինծառայող Յուրիկ Ներսիսյանը: Հոկտեմբերի 9-ին նույն նկարագրով էլի խարբերդցի Վլադիմիր Ասատրյանն է ինքնասպանություն գործել:

*Տես էջ 3*

# Օրինագիծ Ուրուգվայի Սենատում

**Massispost-ից տեղեկանում ենք, որ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության անդամ Դիեգո Կարամանուկյանն ու ՍԴՀԿ Ուրուգվայի կազմակերպության ատենապետ Լուիզ Ափրազյանը հանդիպել են Ուրուգվայի Սենատի անդամ Ռաֆել Մինչելինիին: Հանդիպման ընթացքում ուրուգվայցի սենատորը ներկայացրել է իր նոր առաջարկած օրինագիծը, ըստ որի Ուրուգվայի հաջորդ տարվա բյուջեով պետք է գումար հատկացվի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված մեծ թանգարանի կառուցման համար: Թանգարանում, ըստ սենատորի, պետք է ներկայացվեն Ցեղասպանության մասին հրատարակված գրքեր, ի ցույց կդրվեն ոճրագործությունը վկայող փաստեր: Այդ հաստատությունում կներկայացվեն նաեւ Ուրուգվայի հայ համայնքի պատմությունն ու գործունեության մասին դրվագներ:**

**Հիշեցնենք՝ Ուրուգվայը առաջինը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը 1965թ.-ին:**

**Հ. Ա.**

# Ադրբեջանում, ի տարբերություն Արցախի, ՏԻՄ ղեկավարները նշանակվում են

Լեռնային Ղարաբաղում ժողովրդավարության զարգացման ու քաղաքացիական հասարակության ձեւավորման դեմ բոլոր փորձերն ի սկզբանե դատապարտված են ձախողման: Այս մասին Ադրբեջանին, նաեւ կարելի է ասել, բոլորին հիշեցնում է արված հոկտեմբերի 13-ին որպես Գլխավոր ասամբլեայի ու Անվտանգության խորհրդի պաշտոնական գրություն ՄԱԿ-ում տարածված Արցախի ԱԳՆ հայտարարության մեջ՝ ԼՂ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաբերյալ:

Հայտարարությունը տարածելու խնդրանքով կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունին նախապես գրավոր դիմել էր ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ դեսպան Կարեն Նազարյանը՝ նշելով, որ ինքնակառավարման մարմինների գոյությունը բացարձակ անհրաժեշտություն է որեւէ հասարակության, ներառյալ Լեռնային Ղարաբաղի բնակչության համար:

Նազարյանն ընդգծել է, որ արդեն 5-րդ անգամ անցկացված ընտրությունները ԼՂ-ում վերածվել են ժողովրդավարական գործընթացի, ինչը, ցավոք, դեռեւս անընդունելի է Ադրբեջանի համար, «քանի որ այդ երկրում, ի տարբերություն Լեռնային Ղարաբաղի, ՏԻՄ ղեկավարները նշանակվում են, այլ ոչ թե ընտրվում ժողովրդի ազատ կամարտահայտման միջոցով»:

ՄԱԿ-ի պաշտոնական գրությունում ներառված Արցախի ԱԳՆ հայտարարությամբ շեշտվում է Հարավային Կովկասը բաց ու ժողովրդավարական տարածաշրջան դարձնելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացներին կառուցողական ու հետեւողական վերաբերմունք ցուցաբերելու անհրաժեշտությունը:

**Ա. Հ.**

# Բողոքի ակցիա ընդդեմ Եհովայի վկաների




**Ո՛չ հոգեորսությանը, որդեսպանությանը եւ զոմբիացմանը: Այսօրինակ կարգախոսներով Հայ առաքելական եկեղեցու հավատացյալները Իսահակյանի արձանի մոտից երեկ ուղեւորվեցին դեպի ԱԺ-ի շենք: Երթի նպատակը Եհովայի վկաների նկատմամբ խիստ օրենք սահմանելն է, քանի որ հայ հոգեւորականին՝ տեր Եսայի քահանա Արփենյանին սպառնացել էին: Շուրջ 35000 հոգի ստորագրեցին՝ պահանջելով կառավարությունից խստացնել վերը նշված աղանդի նկատմամբ օրենքը: Ստորագրությունները հանձնեցին ԱԺ: Որից հետո ուղեւորվեցին նախագահական նստավայր, որտեղ նույնպես սլեցին ստորագրություններով լի արկղը: Ակցիան կազմակերպված էր երիտասարդների կողմից: Երթի մասնակից Շողիկ Հարությունյանը համոզված է, որ այս ստորագրահավաքները կտան իրենց ցանկալի արդյունքը. «Ես գիտեմ, որ այս երթով եւ ստորագրություններով փոփոխություն կլինի: Կոչ եմ անում բոլոր երիտասարդներին՝ ուշքի գալ եւ դավանել Հայ առաքելականություն»: Իսկ Սուսաննա Այվազյանը ակնկալում է. «Հուսով եմ՝ ԱԺ-ն կկնդունի այնպիսի որոշում, որ աղանդները չվնասեն մեր հասարակությանը եւ մեր արդար ձայնը կընդունեն նախագահականից եւ վերջ կտան աղանդների վտանգավոր գործունեությանը»:**

**Գ. ՓԵՓՈՅԱՆ**

# Նյու Յորքում հանգանակվեց շուրջ 6 մլն դոլար հօգուտ Մայր աթոռի կրթական ծրագրերի

Ստեղծվեց հայրապետական անձեռնմխելի հատուկ ֆոնդ եկեղեցականների պատրաստության եւ կրթության համար: Հանգանակվեց շուրջ 6 մլն դոլար հօգուտ նորաստեղծ ֆոնդի, որի արդյունքները պիտի հասկացվեն Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունում եկեղեցականների պատրաստության եւ բարձրագույն կրթության համար:



*Վեհափառը Նազար Նազարյանի հետ:*

Հանգանակությունը կատարվել է, ինչպես տեղեկացնում է Հայ եկեղեցու Արեւելյան թեմից ստացված անգլերեն հաղորդագրությունը, Մանհեթենի «Մետրոպոլիտեն» հյուրանոցում տեր եւ տիկին Նազար Նազարյանի կողմից ի պատիվ Ամենայն հայոց հայրապետին տրված ընթրիքի ընթացքում, շուրջ 60 հրավիրյալների մասնակցությամբ: Սիրալիր մթնոլորտում կայացած հանդիպման հանդիսավարն է եղել ՀԲԸՄիության նախագահ Պերճ Սեդրակյանը, որ հայտարարել է առաջին նվիրատվությունը՝ 1 մլն դոլար, միության կրթաթոշակների ֆոնդից:

Հաջորդել է Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ սրբազանի խոսքը, որ, օրինակ բերելով իր անձնական փորձը, ասել է. «Լավ պատրաստված եւ կրթված հոգեւոր հովիվը բանալին է հովվական կյանքի: Այս նախաձեռնությունից օգտվելու է մեր բովանդակ եկեղեցին»:

Հաջորդել է ազգային բարերար Նազար Նազարյանի նվիրատվությունը՝ նույնպես 1 մլն դոլար: Հետեւել են նույննագումար նվիրատվություններ՝ բարերարներ Սարգիս Բեդեւյանի եւ Հրաչ Թուֆայանի կողմից: Ֆոնդի հաջորդ 5-րդ միլիոնը գոյացել է Պերճ Սեդրակյանի (250 հազար), Երվանդ Դեմիրճյանի, Հայկ Դիդիզյանի, Նշան Աթընըզյանի (100-ական հազար), Հերրի Քելեշյանի եւ Օսկար Թաթայանի (50-ական հազար), Ջորջ Գեւորգյանի, Բաբկեն եւ Անահիտ Մկրյանների (25-ական հազար) եւ այլոց նվիրատվություններով:

Պրն Սեդրակյանը հայտարարել է Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան սրբազանի ձեռնարկած հանգանակության արդյունքը նույն նպատակին՝ առայժմ 1 մլն դոլար:

Վերջում գոհունակության ու երախտագիտության խոսք է ասել Վեհափառ հայրապետը:

# Մեծագույն գործեր եւ դրանց վաղվա կատարողները

Ոչ. մեր երիտասարդությունը, ինչպես տարածված կարծիք կա, չի փախչում մեր երկրից եւ այո, մեր երիտասարդությունը մեր անկախ պետականության կրողն է ու մեր երկրի իրական տերը:



Չորեքշաբթի օրը «Մոսկվայի տուն» մշակութա-գործարարական կենտրոնում ամփոփվեցին «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» կարգախոսով ուսանողների ու աշակերտների շրջանում անցկացվող լավագույն գրական ստեղծագործությունների միջազգային 7-րդ մրցույթի արդյունքները եւ պարգեւատրվեցին հաղթողները: Մրցույթն ամեն տարի ավանդաբար կազմակերպում են Համաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը: Այս տարի մրցույթի թեման էր` «Երիտասարդությունը եւ Հայաստանի ապագան»: Ու դատելով համերգ-միջոցառմանը հայ պատանու հնչեցրած թմբուկի զարկից` այդ ապագան հպարտ է լինելու, հայ օրիորդի կատարած «Իլիկները» վկայեց այդ ապագայի լուսավորությունն ու ջերմությունը:

Բացի մրցույթի դափնեկիրներից, որոնք Արցախից են, Հայաստանի Հանրապետությունից ու Սփյուռքի տարբեր համայնքներից, պարգեւատրվեցին նաեւ «ամենահուզիչ», «ամենալավատեսական» «լավագույն ակնարկ», «ամենաբարի» աշխատանքների հեղինակները. դափնեկիրները ՀՀԿ-ից ու ՌՀՄ-ից ստացան նոութբուքներ, մնացած այլ ոլորտներում լավագույնները ստացան dvd-ներ: «Շնորհակալություն մեծագույն գործերի համար», դիմելով ՀՀԿ եւ ՌՀՄ նախագահին` ասաց սփյուռքի նախարար



**Հրանուշ Հակոբյանը**` ընդգծելով. «Մեծ խելքի առաջ գլուխ են խոնարհում, մեծ սրտի առաջ` ծունկը»: Սփյուռքի նախարարը վստահություն հայտնեց, որ «Հայ բարերարների ճեմուղին» մի քանի տասնամյակ անց կհամալրվի նոր ու այսօրվա անուններով: «Մենք եղել ենք` դա է վկայում մեր պատմությունը, որով մենք հպարտանում ենք, մենք կանք` դրա վկայությունը մեր քսանամյա անկախ պետությունն է, եւ մենք կլինենք` սրա ապացույցն այսօրվա հրաշալի պատանիներն ու աղջիկներն են», շեշտեց նախարարը: **Արա Աբրահամյանը**, շարունակելով տիկին նախարարի խոսքը, ասաց. «Մենք կլինենք, քանի որ ուզում ենք լինել»:

Իսկ մեծ էկրանին Արարատ լեռան պատկերն էր` որպես ապագայի, երիտասարդների խոսքերով ասած, Միացյալ Հայաստանի խորհուրդ, բեմում հայկական մի քանի համայնքներ ներկայացնող պատանիներն ու աղջիկները զրուցում էին ապագայի Հայաստանի մասին. «Տեսնում ենք քո ապագան` միավորված ու ուժեղ», որոշեցին երիտասարդները, որոնցից մեկը հայտնեց իր երազանքը. «Ուզում եմ շարունակել Տաթեւի ճոպանուղին, որը կանցնի Արցախով ու վերջին կանգառը կանի Արարատ լեռան գագաթին»:

Ահա, ուրեմն, մեր երիտասարդությունը իր վստահ խոստումով` կերտելու ավելի լավ Հայաստան, քան այսօր ունենք, բայց հենց այսօրվա Հայաստանի հիմքով, մեր անցյալը որպես հենասյուն վերցնելով: Ու այսօրվա երիտասարդները պատրաստ են «վաղվա մեծագույն գործերին»` իրենց ձեռքերով ու իրենց` մեր հայրենիքում:

Արդեն հաջորդ տարի «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» կարգախոսով մրցույթի թեման կլինի «Հայ-ռուսական բարեկամությունը»` նվիրված հաջորդ տարի տոնվող Ռուսաստանի անկախության 20-ամյակին: «Այս կապակցությամբ մենք Երեւանի «Հանրապետական» մարզադաշտում մեծ միջոցառում կանցկացնենք», ասաց Արա Աբրահամյանը` ընդգծելով. «Ռուսաստանում առաջնորդվում ենք հետեւյալ սկզբունքով. ուժեղ Ռուսաստան, այսինքն` ուժեղ Ռուսաստանի հայ, ուժեղ Ռուսաստանի հայ, այսինքն` ուժեղ Հայաստան»:

Միջոցառումը, որին մասնակցեցին նաեւ ներկայացուցիչներ Երեւանում ՌԴ դեսպանատնից` ի դեմս հայ-ռուսական բարեկամության մեծ նվիրյալ Վիկտոր Կրիվոպուսկովի, անցկացվում էր սփյուռքի եւ կրթության ու գիտության նախարարությունների հետ համատեղ. «Կրթության ու գիտության նախարարության հետ միասին ենք, բայց նախարարն այսօր մեզ հետ չէ, իսկ սփյուռքի նախարարը միշտ պատրաստակամ է` անձնապես մասնակից լինելու մեր նախաձեռնություններին ու միջոցառումներին», նկատեց Արա Աբրահամյանը` խոստանալով տարեցտարի մրցույթում ներառել նորանոր ոլորտներ ու ընդգրկել սփյուռքի ավելի շատ համայնքներ:

Հ. Ա.

ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

# Կոոպերացիան կբարձրացնի գյուղատնտեսության արդյունավետությունը

*«Հայագրոֆորումի» բացմանը հավաստիացրեց վարչապետ Տիգրան Սարգսյանը*

Հայ ֆերմերների առաջին համաշխարհային` «Հայագրոֆորում» համաժողովի բացումը երեկ տեղի ունեցավ Երեւանում: Հանդես գալով համաժողովում, վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշեց, որ այս ոլորտում առկա են նկատելի հիմնահարցեր եւ նույնքան նկատելի ձեռքբերումներ: Գյուղի զարգացման համար նա կարեւոր է համարել երկրի տարածքային համաչափ զարգացումը, գյուղատնտեսության արդիականացումը:

Տեղեկացնելով, որ Հայաստանում շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն կա եւ 430 հազար հեկտար մշակովի հող, վարչապետը փաստեց, որ մեկ տնտեսությանը բաժին ընկնող հողատարածքների ծավալը բավականին փոքր է: Նա նշեց, որ Հանրային խորհրդի, գյուղացիական տարբեր մասնագիտական միավորումների եւ գիտահետազոտական ինստիտուտների հետ քննարկման արդյունքում ստեղծվել է գյուղատնտեսության զարգացման հայեցակարգը, որտեղ ներառվել են ոչ միայն գյուղատնտեսության, այլեւ գյուղի զարգացման հիմնահարցերը: «Կառավարության առջեւ ծառացած խնդիրներից մեկն էլ գյուղը ժամանակակից ենթակառուցվածքներով ապահովելն է` ճանապարհների, խմելու եւ ոռոգման ջրի համակարգերի կառուցումը եւ այլն», ասաց Տիգրան Սարգսյանը:

Վարչապետն ընդգծեց, որ 2012-ին Հայաստանի 55 համայնքներում Համաշխարհային բանկի օժանդակությամբ ներդրվելու են կառավարման նոր մեխանիզմներ եւ ձեւավորվելու են կոոպերատիվներ: «Խթանվելու է կոոպերացիան, ինչը կբարձրացնի գյուղատնտեսության արդյունավետությունը տարեկան առնվազն 30 տոկոսով», հավաստիացրեց Տիգրան Սարգսյանը` ավելացնելով, որ պետությունը գյուղտեխնիկայի ձեռքբերումը համաֆինանսավորելու է 50 տոկոսով:

Ա. Մ.

# Մշակման փուլում է ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի նոր միջոցառումների ցանկը

Երեկ տեղի է ունեցել եվրոպական կառույցների հետ ՀՀ պետական մարմինների համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստը: Նիստին ներկա էր նաեւ ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Ռաուլ դե Լուցենբերգերը:

Միջգերատեսչական հանձնաժողովի հերթական` 11-րդ նիստի օրակարգում տեղ էին գտել մի շարք հարցեր, այդ թվում` Եվրոպական հարեւանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի` 2011թ. III եռամսյակում իրականացված միջոցառումների ամփոփում եւ ԵՀՔ ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող նոր` 2012-2013թթ. միջոցառումների ցանկի վերաբերյալ քննարկումներ եւ առաջարկությունների ներկայացում:

Բացման խոսքում ԱԱԽ քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** փաստել է, որ ՀՀ-ԵՄ համագործակցության գործողությունների ծրագրով նախատեսված շուրջ 170 միջոցառումներ եւ գործողություններ ամբողջությամբ կատարված են, մինչեւ տարեվերջ կավարտվեն եւս 47-ը, որոնք գտնվում են ընթացքի մեջ: Այս կամ այն պատճառով դեռեւս չկատարված 24 միջոցառումները տեղ կգտնեն 2012-2013թթ. նոր ծրագրում: «Հայաստան-ԵՄ քաղաքական համագործակցությունը արդյունավետորեն զարգանում է: Մենք ունենք դրական արդյունքներ արդարադատության, ազատության եւ անվտանգության ոլորտում իրականացվող բարեփոխումներում: Դրական են գնահատվում ազատ, խոր եւ համապարփակ առեւտրի, ասոցացման համաձայնագրի շուրջն ընթացող աշխատանքները, եւ սահմանված ժամանակացույցի համաձայն մենք մինչեւ դեկտեմբերի վերջ կավարտենք նաեւ տնտեսական բնույթի այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի մենք մեկնարկենք որակական նոր փուլ այս ոլորտում», ասել է Արթուր Բաղդասարյանը:

Որպես ԱԱԽ աշխատակազմի, ինչպես նաեւ միջգերատեսչական հանձնաժողովի հետ արդյունավետ գործակցության գնահատական` ԱԱԽ քարտուղարը պատվոգիր է հանձնել դեսպան Ռաուլ դե Լուցենբերգերին, որն ավարտում է ԵՄ պատվիրակության ղեկավարի իր առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում:

**Ռաուլ դե Լուցենբերգերն** իր հերթին շնորհակալություն է հայտնել այս տարիների ընթացքում ծավալված սերտ համագործակցության համար` նշելով, որ համագործակցության ծրագիրը շատ հարուստ է եւ այս առումով նա մեծ աշխատանք է թողնում իր գործընկերներին:

Նիստի ընթացքում զեկույցներով եւ համապատասխան առաջարկություններով հանդես են եկել միջգերատեսչական հանձնաժողովի անդամները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Խեղկատակություն 2 արարով կամ ինչու ՀԱՐՈՒԹԻՆ մերժեցին 2-րդ անգամ

**Ինչպես մամուլից հայտնի դարձավ, իրեն ՀՌԱԿ ատենապետ հորջորջող Հարութ Առաքելյանը 2-րդ անգամ միեւնույն համագումարն է հրավիրում` 19-րդի 2-րդ մասը: Այն, որ այդ կուսակցությունը Հարութը դեռ իր ատենապետության օրոք կլոունադայի էր վերածել, հայտնի փաստ է: Իսկ հիմա էլ հայտնի է դառնում, որ Հայաստանի արդարադատության նախարարության համապատասխան մարմինը 2-րդ անգամ է նրան մերժում գրանցել որպես ՀՌԱԿ ատենապետի, խորհուրդ տալով` «եթե վեճ ունես, փորձիր լուծել դատարանի միջոցով»: 2-րդ անգամ հրավիրելով միեւնույն համագումարը, վերջիններս փաստորեն խոստովանում են, որ նախկինում իրենց արած բոլոր քայլերը, այդ թվում` գործող ատենապետ Էդուարդ Անտինյանի հեռացումը եւ այլն, չեն համապատասխանում ոչ միայն Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլեւ հենց ՀՌԱԿ կանոնադրությանը: Կարող ենք փաստել, որ հետեւաբար անօրինական էին նաեւ ՌԱԿ ատենապետ Մայք Խարաբյանի ողջույնի ու նմանատիպ այլ նամակները եւ հեռագրերը, վերջիններու աջակցել են Հայաստանի օրենքները խախտողներին: Այստեղ, իհարկե, զարմանալ կարելի է, որ Մ. Խարաբյանը աջակցում է մեկին, որը անօրինական կերպով վաճառել է ՀՌԱԿ-ի գույքը, ինչի առիթով արդեն իսկ քրեական նախաքննություն է սկսված: Հետաքրքրական է, թե այս հերթական համագումար-խեղկատակության ժամանակ Հարութն ի՞նչ է անելու` հավանաբար պետք է Անտինյանին նորից վերականգնի կուսակցության շարքերը ու ընտրի ատենապետ, որ հետո կարողանա նորից հեռացնել: Ինչեւէ, այս ամենը շատ զավեշտալի կլիներ, եթե խոսք գնար, ասենք ինչ-որ մեկի անձնական կուսակցության մասին, այլ ոչ թե ռամկավար անունը կրող կուսակցության, որը նույնիսկ չհիշեց ՌԱԿ 90-ամյակը եւ չմասնակցեց դրա տոնակատարություններին, որը տեղի ունեցավ Թեքեյան կենտրոնում Արմենական-ՌԱԿ-ի կազմակերպմամբ:**

**Ինչեւէ, արդեն ձանձրալի դարձող այս խեղկատակության հերթական արարը նույնպես կատարվում է Հայաստանում կուսակցությունների մասին օրենքի խախտումներով, եւ սպասել, որ այդ մարդկանց մոտ, որոնք իրենց կուսակցություն են հորջորջում, ինչ-որ բան կփոխվի, անիմաստ է:**

Ռ. Ա.

# Ողբերգություն հայկական բանակում. 3 զոհ 5 օրում




ՖՈՏՈԼՈՒՐ

**Վլադիմիր Անդրանիկի Ասատրյան. 19 տարեկան**: Հոկտեմբերի 9-ին զորամասում պահպանության տեղամասի մարտական դիրքում հերթապահություն իրականացնելիս իրեն ամրակցված ԱԿՄ տիպի ինքնաձիգով ինքնասպանություն է գործել:

**Յուրիկ Գեւորգի Ներսիսյան. 19 տարեկան**: Մարտական դիրքում հերթապահություն իրականացնելիս իրեն ամրակցված զենքով ինքնասպանություն է գործել:

**Արամ Աշոտի Մելքոնյան. 21 տարեկան**: Զենքը մաքրելիս խախտել է անվտանգության կանոններն ու անզգուշությամբ կրակել. որովայնի շրջանում ստացած վնասվածքը մահացու էր:

Վերոնշյալ երեք դեպքերը գրանցվել են վերջին 5 օրվա ընթացքում: ՊՆ քննչական ծառայությունը զինծառայողների մահվան առթիվ քրեական գործեր է հարուցել ՔՕ 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ «Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը»:

Ըստ ոչ պաշտոնական տվյալների, այս տարի բանակում գրանցվել է մահվան 30 դեպք, որից միայն 9 է թշնամու գնդակից: **Աղասի Աբրահամյան, Հայկ Մկրտչյան**: Այս ժամկետային զինծառայողները զոհվել են մեկ ամիս առաջ՝ ստայի ծեծի, անտարբերության ու զինակցի փամփուշտի հետեւանքով: **Հովհաննես Վարդանյանն** էլ մի քանի ամիս բանակում ծառայելուց հետո հայտնվեց Նորքի հոգեբուժարանում՝ շիզոֆրենիա հիվանդության ախտորոշմամբ:

Թեպետ ՊՆ քննչական ծառայությունն ու զինվորական դատախազը յուրաքանչյուր մահվան դեպքից հետո հավաստիացնում են, որ սպանությունները բացահայտվելու են, մեղավորները՝ պատժվելու, սակայն զինվորներին սպանած կամ ինքնասպանության դրդած որեւէ հրամանատար կամ սպա չի ձերբակալվել:

Երեք սեւազգեստ մայրերը նախագահի նստավայրի դիմաց էին՝ պետության գլխավոր հրամանատարից պահանջում էին ընդունելություն: «Ասում են՝ քո որդին դժբախտ պատահարի զոհ է, էլեկտրահարվել է: Բա որ էլեկտրահարվել է, ինչո՞ւ են նրա ձեռքերն ու ոտքերը պատռված, դեմքը՝ կապտած», լացելով բղավում էր **Տիգրան Օհանջանյանի** մայրն ու ցույց տալիս անկախ փորձագիտական խմբի կատարած լուսանկարները: Նա պատմում է, որ քննիչները գործը սխալ ուղղությամբ են տանում: «Ֆելդշերը ասել է, որ ինքը որդուս պատառոտված շորերը հանել է եւ ուղարկել քննիչին որպես ապացույց, բայց քննիչը նոր հագուստ է ներկայացրել: Նա լկտիաբար ասում է, որ պատառոտված հագուստը Տիգրան Օհանջանյանինը չէր»:

**Վալերիկ Մուրադյանը** զոհվել է 2010-ի մարտին: Մոր խոսքերով՝ որդին պատահաբար տեսել է, թե ինչպես է բարձրաստիճան սպան զորամասից բենզին գողացել: Վերջին հեռախոսազրույցի ժամանակ որդին մորը պատմել է այդ մասին: Մի քանի օր անց մայրը ստացել է որդու դիակը: «Ի՞նչ է արել իմ որդին, որ նրան այդպես հոշոտել են: Ինչի՞ համար: Ուզում եմ վերջին մայրը լինել, ում որդուն սպանում են խաղաղ պայմաններում: Երանի իմ որդուն թուրքը սպանած լիներ, գոնե կասեի հայրենիքի սահմանը պաշտպանելիս է զոհվել», ասում էին խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների մայրերը:

Բաղրամյան 26 հասցե եկած ՊՆ ներկայացուցիչ Վարդան Ղուկասյանը մայրերին առաջարկեց միասին գնալ ռազմական ոստիկանության վարչություն՝ մասնակցելու կոլեգիալ նիստին:

Թե ինչու ծնողներին նախապես չեն տեղեկացել քննարկման մասին՝ Ղուկասյանն ասաց, որ կոլեգիալ նիստը որոշվել էր դեռեւս մեկ ամիս առաջ, իսկ ծնողներին զգուշացրել են առավոտյան: Զոհված զինծառայողների մայրերը **«Ազգ»**-ին ասացին, որ ռազմական ոստիկանությունից զանգ ստացել են առավոտյան ժամը 12-ին: Ծնողների գնահատմամբ՝ եթե նախագահական նստավայրի դիմաց բողոքի ակցիա չկազմակերպեին, կոլեգիալ նիստի չէին հրավիրի: «Մեր որդիներին սպանել են, ու արդեն 4-5 տարի վազում ենք քննիչների հետեւից, որպեսզի ճշմարտությունը բացահայտեն: Մեզ պետք է նախապես զգուշացնեին, որպեսզի մենք փաստաբանների հետ մասնակցեինք կոլեգիալ նիստին: Սակայն դա ոչ մի օգուտ էլ չի տա: Քանի անգամ ենք մասնակցել քննարկումների, հանդիպել քննիչներին, բայց նրանք ոչ մի բան էլ չեն ասում: Պահանջում ենք նախագահից, որ պատժի մեղավոր բոլոր հրամանատարներին ու գործի քննությունը սխալ ուղղությամբ տարած քննիչներին», ասացին մայրերը:

Այնուամենայնիվ, երեք զոհված զինվորների ծնողները հանդիպեցին ՊՆ փոխնախարար Վլադիմիր Պետրոսյանի հետ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# Orange-ը առաջին հայկական միջազգային «ԱՐՄՏԵԼԵՄԵԴ. Ճանապարհ դեպի ապագան» կոնգրեսի գլխավոր հովանավորն է




Երեւանում մեկնարկեց տելեբժշկությանն ու էլեկտրոնային առողջապահությանը նվիրված Առաջին հայկական միջազգային «ԱՐՄՏԵԼԵՄԵԴ. Ճանապարհ դեպի ապագան» կոնգրեսը, որը կշարունակվի մինչեւ հոկտեմբերի 16-ը ներառյալ: Կոնգրեսի կազմակերպիչներն են Տելեբժշկության հայկական ասոցիացիան (ՏԲՀԱ), Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը եւ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ, UITE), Տելեբժշկության եւ Է-առողջապահության միջազգային ընկերության (ISfTeH) եւ Ամերիկյան տելեբժշկական ասոցիացիայի (ATA) հետ պաշտոնական գործընկերության ձեւաչափում: Կոնգրեսի գլխավոր հովանավորն է Orange-ը:

Տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը արմատականորեն փոխել է առողջապահական ծառայությունների մատուցումը, եւ շատ մասնագետների այսօր խոսում են «առողջապահական հեղափոխության» մասին: Կոնգրեսի օրակարգում կլինեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխարհում եղած փորձն այս ոլորտում, դրա հնարավոր կիրառումը Հայաստանում, ոլորտի մարտահրավերներն ու հիմնախնդիրները:

«Մեր խմբի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական ուղղություններից է ծառայեցնել մեր տեխնոլոգիաները հանրային օգուտին, ներառյալ՝ առողջապահական ծրագրերին: Այս համաժողովին մենք մասնակցում ենք ոչ միայն ֆինանսական աջակցությամբ, այլ նաեւ մեր միջազգային փորձով: Մենք հրավիրել ենք Ֆրանս Տելեկոմի՝ e-առողջության լավագույն մասնագետներից մեկին՝ Պատրիս Քրիստոֆինիին, որը զեկույցով է հանդես գալու եւ փորձելու է փոխանցել բազմաթիվ երկրներում ձեռք բերված մեր փորձը», ասաց Orange Արմենիայի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Կոնգրեսը կտեւի երկու օր, որի ընթացքում տեղի կունենան պլենար եւ գիտական նիստեր, փորձագիտական քննարկումներ եւ կլոր սեղաններ, կկազմակերպվեն հիմնարար դասախոսություններ տելեառողջապահության եւ հարակից ոլորտների համաշխարհային ճանաչում առնվազն տասնհինգ փորձագետների կողմից: Նախատեսվում են նաեւ կրթական ուղղվածության միջոցառումներ (Տելեառողջապահության միջազգային դպրոցի սեմինար), եւ, վերջապես, հայրենական եւ միջազգային ձեռնարկությունների ցուցահանդես:

Իրադարձությանն իր տեսակի մեջ առաջինն է ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ տարածաշրջանում:

**Մանրամասների համար խնդրում ենք այցելել. http://congress.armtelemed.org/**

# Բանակի գլխավոր արժեքը զինվորի կյանքն է

*1-ին էջից*

**Այ մարդ, որ դեռ հետաքննություն չեք արել՝ ի՞նչ իմացաք ինքնասպանություն է, կամ հենց եթե ինքնասպանություն է՝ սպանությունից էլ վատ է, ուրեմն, որովհետեւ այդ դեպքում մեղավոր են բոլորն, ովքեր շրջապատել են ինքնասպանվողին, նպաստել են դրան կամ աչք են փակել նպաստողների արարքների վրա: Այդ իմաստով՝ ինքնասպանություն հասցրածներին ավելի խիստ պետք է պատժել, սպանություն գործողին համարժեք: Սակայն խնդիրը մասնավոր դեպքերը չեն այլեւս: Երկար ժամանակ ծանր խոսքեր չէինք գրում բանակի ղեկավարության հասցեին՝ գիտակցելով, որ հայոց բանակը մեր երկրի համար մեծագույն արժեք է, նրա հոռի երեւույթները մեր հասարակության մեջ առկա հոռի երեւույթների արտացոլանքն են (ինչպես, ի դեպ, նաեւ այլ երկրներում), որի դեմ պայքարելու կամքի մասին ժամանակ առ ժամանակ հավաստում էին և՛ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, և՛ այլ առանցքային զինվորականներ: Սակայն հիմա արդեն կարեւոր էլ չէ, թե ով՝ ի՞նչ է բարձրաձայն ասում, ո՞վ է խոսում մահվան դեպքերը բացահայտելու պատրաստակամությունից, հիմա բանը բանից անցել է, տղերք, իրավիճակին չեք տիրապետում: Բանակը կարգապահության, բարքերի բյուրեղացման առումով հասարակության առաջին դիրքերում լինելու փոխարեն (քանի որ զինվորական կարգապահությունն, այնուամենայնիվ, բանակում է, եւ ոչ թե հասարակության մեջ)՝ շարժվում է պոչից, կլանում եւ արտացոլում հասարակական բարքերում առկա կեղտի տասնապատիկը: Իսկ սա արդեն բանակի ղեկավարության խնդիր է, ով չի կարողանում մեծ ախորժակները, ստորաբաժանումների եւ կառույցների ղեկավարողների ամբիցիաները ստորադաս դնել զինվորի կյանքից, ով չի գնահատում զինվորին՝ որպես բանակի գլխավոր արժեք: Այդպիսիք պետք է ինքնակամ լքեն բանակը, որը ոչ թե նրանց սեփական բոստանն է, այլ Հայաստանի Հանրապետության ազգային բանակը, մեր բոլորինը: Հարցերը ծագում են ինքնին՝ ինչո՞ւ մի քանի գեներալ ու սպա չեն հեռացվում այն ստորաբաժանումներից, որտեղ մահվան դեպքեր են գրանցվում, ինչո՞ւ երկրի անկախության 20-ամյակի պարգեւատրվածների մեջ չհնչեց անգամ մեկ շարքային զինվորի ազգանուն՝ գեներալնե՞րն են բանակ կայացնողները, դիրքերում թշնամուն դիմակայողները, ինչու բանակում մահացած զինվորների հարազատների փաստարկներն ու ապացույցներն այլ են, հետաքննական մարմիններինն՝ այլ: Ոչ մի պաշտոն ու պաշտոնյա, անգամ եթե նրա անձնական որակները շատերին բարձրակարգ են թվում, զինվորի կյանք չարժեն: Եթե բարեկիրթ ու կազմակերպված անձ եւ գուցե շատերիս համար ընդունելի Սեյրան Օհանյանը չի վերահսկում իրավիճակը, ապա բոլորովին պարտադիր չէ, որ նա նախարար մնա՝ նախարար լինելը հո ինքնանպատակ չէ՞, թող այնպիսի մարդ գա, ով կարող է արտակարգ միջոցառումներ կիրառել եւ բարքերը հնարավորինս մաքրել (ասում ենք՝ հնարավորինս, քանի որ հասկանալի է՝ երբ հասարակությունն ինքը մաքուր լինի, բանակը նույն պատկերը կունենա): Կամ եթե մահվան դեպքերը շատ են Արցախի պաշտպանության բանակում, ուրե՛մն Մովսես Հակոբյանն իր տեղում չէ. հասկանում եք, լավ մարդ, կամ լավ զինվորական լինելը քիչ է այդպիսի պաշտոններում:**

**Եթե 100 անդաստիարակ եւ կոռումպացված սպայի պետք է պատժել կամ հեռացնել, թեկուզ որպես բարքերը մաքրելու օրինակ, դա պետք է անհապաղ անել, իսկ եթե գողական բարքերն այնքան են խորացել բանակում, որ այդ մարդկանցից վախենում են ազատվել, ուրեմն բանակի գերագույն գլխավոր հրամանատարը վերջապես արտակարգ միջոցառումներ պետք է իրականացնի բանակի ղեկավարության շրջանում՝ քաոսը, տեսնում եք, չի օգնում: Բոլոր դեպքերում՝ անկախ նրանից, թե ով է մեղավոր բանակում գլուխն անտանելի բարձրացրած ոչ կանոնադրական հարաբերությունների համար, բանակում հասունացել է կարդինալ միջոցառումներ իրականացնելու ժամանակը, այլապես որդիներին բանակ ուղարկող ծնողները վստահություն չունեն իրենց զավակի ողջուառողջ վերադարձի հետ կապված, այլապես բանակը փայփայելու զգացումը ընդհանրապես տեղի կտա վախին ու անորոշությանը, իսկ որդեկորույս ծնողների ցավը երկրի ու բանակի դեմ ուղղողների պակաս չի զգացվի: Այս դեպքում բոլորովին կարեւոր չէ, որ մեկ տասնյակ կամ մեկ հարյուրյակ մարդ կարող են կորցնել պաշտոնները, կարեւոր են դրանց հոգեբանական անդրադարձները բանակի բարոյահոգեբանական վիճակի, կարգապահությունը բարձրացնելու կամ կոռումպացված վարքուբարքը զսպելու առումով: Եվ մեր հասարակության ընդհանուր առողջացման ուղղությամբ աշխատելու խնդրին լրջորեն նայելու համար եւս գուցե բանակում տեղի ունեցող մահերը ահազանգ կլինեն: Գուցե Հայաստանի հեռուստատեսությունների պատասխանատուները եւս իրենց կհավաքեն՝ հասարակություն փչացնող իրենց հաղորդումներից ու սերիալներից վերջապես հրաժարվելու համար:**

## Գիտաժողով Բեռլինում

# Գերմանիան պատասխանատու է

### *Բարոյական հարթությունից հետո սպասել իրավականի՞ն*

Սեպտեմբերի 22-ին Բեռլինի «Հայնրիխ Բյոլ» հիմնադրամի կազմակերպած «Հայոց ցեղասպանությունը եւ գերմանական հրապարակայնությունը» մեկօրյա գիտաժողովը նպատակ ուներ, ինչպես բազմիցս շեշտվեց կազմակերպիչների խոսքում, «եվրոպական չափման մեջ» անդրադառնալ «դեռ չվերջացած մի պատմության», որ թեեւ պատմաբանների, քաղաքական գործիչների դասակարգմամբ աներկբա ցեղասպանություն է, բայց ճանաչել տալու առումով դեռեւս ճանապարհ ունի անցնելու: Բունդեսթագի «Հայոց տեղահանության եւ կոտորածների» մասին 2005-ին ընդունած բանաձեւը, որ ներառում էր նաեւ Գերմանիայի ժխտական դերն այս հարցում, ժամանակին պարտավորեցրել էր ԳԴՀ օրենսդիր մարմնին վերանայման եւ հաշտեցման ուղղությամբ աշխատանք տանել: Հիշյալ գիտաժողովը կազմակերպելով հիմնադրամը ցանկություն ուներ գնահատել Առաջին աշխարհամարտի, Գերմանիայի դերը, խոսել վերանայման, հիշողության եւ հաշտեցման ուղիների մասին՝ հաշվի առնելով պատմաբանների, քաղաքագետ դիվանագետների կարծիքը, ծանոթանալ քաղաքացիական նախաձեռնություններին: Գիտաժողովը խիստ հագեցած ծրագիր ուներ. առաջին բաժնում մասնագիտական խիտ հենքով ելույթներ էին: «Հայոց ցեղասպանության մասին գիտահետազոտական աշխատանքի մակարդակը» վերնագրյալ ֆրանսերեն բանախոսությամբ հանդես եկավ Փարիզի համալսարանի դասախոս, ճանաչված պատմաբան, Նուբարյան գրադարանի տնօրեն Ռայմոնդ Գեւորգյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ աշխատանքի տարբեր փուլերին, խոսեց խնդիրների մասին, ներկայացրեց տարբեր երկրներում գոյություն ունեցող արխիվները, դրանցում պահվող փաստաթղթերը եւ այն անհատներին, որոնք վերջին տարիներին լրջորեն զբաղվում են դրանցով:

«20 տարի է, որ գիտական մակարդակի վրա սիստեմատիկ աշխատանք մը սկսած է: Հիմա ցեղասպանությունը ուղղակի գիտության մարզ մը դարձած է, իսկ Հայոց ցեղասպանությունը՝ միջազգային բնույթ առած է, ամփոփ ներկայացրեց Փարիզի Նուբարյան գրադարանի տնօրենը, որն իր ելույթում նկատի առնելով լսարանը՝ կենտրոնական տեղ հատկացրեց Գերմանիայի պատասխանատվությանը: (Ռայմոնդ Գեւորգյանի հետ մեր զրույցը **«Ազգում»**՝ առաջիկայում): Այնուհետեւ իր տեսակետը հնչեցրեց Ցյուրիխի համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Հանս Լուկա Քիզերը, որ խոսելով պատասխանատվության եւ համապատասխանատվության մասին, օրվա բառեզրը հեղինակեց՝ qualifizierte Mitverantwortung, ինչը թարգմանում ենք երկու գիտնականների օգնությամբ: Ըստ Ռայմոնդ Գեւորգյանի, այս բնորոշումը պետք է թարգմանել վավերացված, ըստ Միհրան Դաբաղի՝ նշանակալի համապատասխանատվություն: Շվեյցարացի պատմաբանը, որ առավելապես ծանրացավ Թուրքիայի դաշնակից Գերմանիայի մեղսակցության վրա, մեզ հետ զրույցում անդրադարձավ «գերմանացիների հաճախ վախվորած դիրքորոշմանը» եւ ասաց, թե «այսօր էլ պարզ դարձավ, որ այս հարցի առնչությամբ արժե ավելի հստակություն, ավելի կայուն ողնաշար» ցույց տալ: «Կարեւոր է ուսումնական հաստատություններում, ինչպես նաեւ հրապարակային բոլոր մակարդակներում պատմության անկյունադարձային այդ հատվածի դերն այլեւս ոչ թե նվազեցնելով ներկայացնել, ինչպես հաճախ է պատահել, այլ ընդունել հայերի դեմ կատարվածն իբրեւ անվիճելի ցեղասպանություն, իսկ Գերմանիան՝ իբրեւ դաշնակից, վավերացված, նշանակալի համապատասխանատվություն պիտի ստանձնի, ինչը նշանակում է բարեխիղճ, բազմաշերտ վերանայում», **«Ազգին»** փոխանցեց պատմաբանը:

«Առաջին համաշխարհայինը, ազգայնականությունը, իմպերիալիզմն ու ցեղասպանությունը» թեմայով զեկուցման մեջ Կոնստանցի համալսարանի նոր պատմության ամբիոնի դոկտոր, պրոֆեսոր Բորիս Բարթը հանգամանորեն խոսեց պանթուրանականության մասին, անդրադարձավ գենոցիդ, ցեղասպանություն, զանգվածային սպանդ, էթնիկ մաքրագործում բառեզրերի կիրառմանն ու դրանց տարբերություններին: Նրա՝ բանավեճի նյութ տվող ելույթին կանդրադառնանք առաջիկայում: «Հայոց ցեղասպանությունը եւ գերմանական ռայխի դերը» թեմայով ելույթ ունեցավ հրապարակախոս Վոլֆգանգ Գուստը: 2003-ից նրա՝ արխիվային հարուստ փաստաթղթեր պարունակող ինտերնետային www.armenocide.net պորտալն ամեն օր 3000-5000 այցելու է ունենում: Գիտաժողովի ավարտին պատասխանելով մեր՝ «2015-ը մոտենում է: Իբրեւ հրապարակախոս ի՞նչ եք ակնկալում գերմանական Բունդեսթագից, կառավարությունից» հարցին Վոլֆգանգ Գուստն ասաց. «Կառավարությունից ակնկալում եմ, որ ավելի հստակ առաջարկներ անի, որ ճանաչի ցեղասպանությունը, հենց գենոցիդ կոչի այն: Բունդեսթագի պատգամավորների համար ինքնըստինքյան հասկանալի լինի, որ ցեղասպանություն պիտի կոչվի, ոչ միայն բանաձեւում, այլեւ՝ ընդհանրապես: Ցեղասպանության ճանաչումն ինձ համար ավելի է կարեւորվում, երբ հասարակությունն է ճանաչում, քան քաղաքական գործիչները դա անում են բանաձեւի միջոցով: Ովքե՞ր են կարդում բանաձեւերը, քչերը: Հույս ունեմ, որ Թուրքիան, հաշվի առնելով (100-ամյա տարելիցի) ժամանակը, պաշտոնական առումով լիբերալություն կներմուծի, սա իհարկե մեր ձեռքում չէ, բայց, մյուս կողմից, գերմանացի քաղաքական գործիչները թուրքերի հետ խոսելիս անշուշտ հնարավորություն ունեն այդ խնդրին անդրադառնալու, թեեւ կասկածում եմ, թե շատերը թուրքերի հետ սրա մասին խոսում են»: Մեր զրույցում Ռայմոնդ Գեւորգյանն ասաց, թե «ինքնաքննադատության այս թեքումը, որ առած է Գերմանիան, անշուշտ Երկրորդ պատերազմի ցեղասպանության պատճառներով, երբեմն քիչ մը ծայրահեղության կտանի: Մյուս կողմեն՝ այն, որ նկատի կառնեն մյուսին ցավը եւ կլսեն, շատ կարեւոր է: Անկեղծ ըսեմ՝ շատ գեղեցիկ է այս մոտեցումը»:

Մեծ ընդմիջումից հետո բարձրախոսը տրամադրվեց «Գերմանա-հայկական նամականի» (ADK) եռամսյա հանդեսի գլխավոր խմբագիր Ռաֆֆի Քանդյանին, Բունդեսթագում Կանաչների խմբակցության արեւելաեվրոպական քաղաքականության խոսնակ պատգամավոր Մարիլուիզե Բեքին եւ Հեսսենի երկրամասային խորհրդարանում՝ Լանդթագում Կանաչների խմբակցությունը ներկայացնող պատգամավոր Մյուրվեթ Էոզթյուրքին: Ռաֆֆի Քանդյանը փուլ առ փուլ ներկայացրեց Հայոց ցեղասպանության հարցի արծարծումը ԳԴՀ օրենսդիր մարմնում՝ հստակ օրինակներով ցույց տալով, որ քաղաքական գործիչները, ելնելով քաղաքական նպատակահարմարությունից, հարցի առնչությամբ հաճախ շեշտակի փոխել են իրենց դիրքորոշումը: «Ձեր՝ պատմությունը թերթելուց հետո իբրեւ պատգամավոր այնքան էլ լավ չեմ զգում», Քանդյանին դիմեց Մարիլուիզե Բեքը՝ շատերի նման ընդգծելով, թե Հայոց ցեղասպանության մասին իմացել է շատ ուշ՝ Վերֆել կարդալով եւ 1986-ին Ռալֆ Ջորդանոյի «Հայկական հարց այլեւս գոյություն չունի» ֆիլմը դիտելով: Հեսսենի Լանդթագի պատգամավոր Էոզթյուրքն էլ նշեց, թե գերմանական դպրոց, Քյոլնի համալսարանի պատմության բաժինն ավարտելով հարցին տեղեկացել է պատահաբար, Սիրիայում թուրքերեն խոսող մի հայից ու ամաչել է: «Ներքեւից վերեւ պիտի կազմակերպել հրապարակայնությունը», ասաց քրդական ծագմամբ ալեւի Էոզթյուրքը:

Գիտաժողովի մասնակիցները համակարծիք էին, թե նյութը պիտի ներառվի երկրամասային դպրոցական ծրագրերում: Քանդյանը ցավ հայտնեց, թե գործադիր մարմնի՝ երկրամասային կրթական գործի կազմակերպիչների չպատճառաբանված բացակայությունը իրենց պիտի պարտադրի նախ՝ պարզել պատճառները, այնուհետեւ հետամուտ լինել նրանց հետ հանդիպման:

«Բունդեսթագի բանաձեւը թեպետ վատը չէ, բայց սխալ է եզրաբառը չգործածելը: Դրանում շոայի եզակիությունն ընդգծելու երկյուղածությունը կա: Մի երկիր, որ ժխտում է ցեղասպանությունը, եւ դա չենք ստանձնում, մենք էլ ենք հարաբերականացնում», ասաց թուրք գրող Դողան Ակհանլին:

Ելույթների ավարտին՝ հարցուպատասխանի ժամանակ ուշագրավ այլ դրվագներ էլ եղան: Մի թուրք ունկնդիր իր դիտարկումները ներկայացրեց. «Պատերազմն էր որոշիչը, թե չէ նման ոչնչացում չէր լինի: Ո՞վ էր Թուրքիային դեպի պատերազմ մղող ուժը»: «Ուզում եք ասել՝ Գերմանիա՞ն է Թուրքիային ներգրավել», նրան հարց ուղղեց նիստը վարողը: «Այո, Էնվերը Ձեր մարդն էր», «Բյոլ» հիմնադրամի ներկայացուցչի հարցին պատասխանեց թուրքը: «Պատերազմը միջոց էր: Գերմանիան Թուրքիային չի ներգրավել, աղբյուրները շատ են», միջամտեց Ռայմոնդ Գեւորգյանը, որ մեզ հետ զրույցում որակեց սա իբրեւ հստակ ժխտողականություն:

Գիտաժողովի երրորդ բաժնում ամբիոն տրամադրվեց քաղաքացիական տարբեր նախաձեռնությունների հեղինակներին, դրանց թվում՝ Սոֆիա Գեորգալիդիսին, Մաթթիաս Քլինգենբերգին, Դողան Ակհանլիին, Թորոս Սարյանին, որոնք խոսեցին Հիշողության մշակույթ ձեւավորելու, թեման քննարկումների, ցուցահանդեսների, ներկայացումների, բանավոր զրույցների, հիշողության վայրեր այցելությունների միջոցով արթուն պահելու մասին: Հակիրճ ամփոփենք նրանց մտահոգությունը. նման նախագծերը իրականացվում են նվազ ֆինանսական միջոցներով, բայց մյուս կողմից՝ քիչ միջոցներով էլ կարելի է գործ անել:

«Մենք լոբբինգով չենք զբաղվում», գիտաժողովի ավարտին ասաց «Բյոլ» հիմնադրամի ներկայացուցիչ Բաստիան Հերմիսոնը: «Ո՞րն էր ըստ էության այս գիտաժողովի նպատակը» հարցն ուղղեցինք Ռաֆֆի Քանդյանին:

«Որքան որ հասկցա, նախ հարցը սեղանին վրա դնելն է: Գալով Գերմանիո մասնակցությանը, այո, պատասխանատվություն ունին, բայց չի նշանակեր, որ անոնք էին ցեղասպանություն իրագործողները: Գործակից էին, բայց մղիչ ուժը եւ ծրագրողը չէին: Բնաջնջման մասին փաստ չկա», ասաց պարոն Քանդյանը: «Մինչեւ 1915 թվականը ի՞նչ ակնկալիք ունեք գերմանական Բունդեսթագից, կառավարությունից»՝ մեր 2-րդ հարցին ի պատասխան «ADK»-ի խմբագիրն ասաց, թե իր համար էլ նորություն էր պատգամավոր Բեքից լսել, թե «նման բան խորհում են Բունդեսթագում: Արդեն որոշ նախապատրաստություններ կամ տեսած են կամ տեսնելու վրա են»:

**«Ազգի»** հետ զրույցում Բորիս Բարթը նախ փոխանցեց, թե «քանի որ սովորաբար գիտությունն ու հրապարակայնությունը մի քիչ դժվար է իրար մոտ բերել», ուստի գիտաժողովը հաջողված է համարում: «2015-ին ընդառաջ, կարծում եմ, գիտական մակարդակով շատ բան կկազմակերպվի՝ կոնֆերանսներ, գրքերի հրատարակում, նորից հարթակ կլինի հրապարակային քննարկման համար: Ինչ վերաբերում է քաղաքական մակարդակին, անկեղծ ասած՝ չգիտեմ», ասաց պատմաբանը:

Ժամը 20-21.30 հայտարարված հանրային քննարկումը սկսվեց ժամանակին՝ հավաքելով ունկնդիրների ստվար ներկայություն, որոնց շարքերում էին թե՛ Հայաստանի դեսպան Արմեն Մարտիրոսյանը, թե՛ այլ դիվանագետներ, պատմաբաններ, հարցի մասնագետներ: Անշուշտ, Թեսա Հոֆմանը, Ժիրայր Քոչարյանը, պատմաբան Վահե Թաշչյանը եւ այլք:

Կանաչների կուսակցության համանախագահ Ջեմ Էոզդեմիրը՝ երեկոյան քննարկման հիմնական բանախոսը, շեշտեց, թե ինքը թուրք համայնքի անունից չէ, իբրեւ կուսակցական է խոսելու: Նա հատուկ ընդգծեց իր՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու առիթով 2001-ին Քյոլնի Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցում հուշահանդեսին ներկա գտնվելու փաստը, եղելություն, որ քանիցս շեշտեցին իր կուսակիցները գիտաժողովի ժամանակ: (**«Ազգն»** այդ այցին անդրադարձել է ժամանակին- Ան. Հ.):Հրանտ Դինքի սպանությունը պատահական չէր, հավասար էր Ռաբինի սպանությանը, ասաց Էոզդեմիրը՝ անդրադառնալով ֆուտբոլային դիվանագիտությանը: «Թուրքիայի 0 խնդիր հարեւանների հետ քաղաքականության արդյունքը զրո է,- ասաց նա շարունակելով,- ԵՄ-ի մեջ կարող ես լինել, երբ բոլոր հարեւաններիդ հետ լավ հարաբերություն ունես»: «Միգուցե Դինքի դատավարությունը ժամանակակից Թուրքիայի կատարսիսը դառնա», ելույթը եզրափակեց Ջեմ Էոզդեմիրը:

Մեզ հետաքրքրում էր նաեւ թուրք գրող, իրավապաշտպան Դողան Ակհանլիի՝ լսարանին փոխանցածը: «Հակառակ որ 70-ականներին հայերի կողմից թուրք դիվանագետներ էին սպանվում, Թուրքիայում հրապարակավ չէր խոսվում այդ մասին: Ուրացումը մեզ եւ պետությանը փակուղի էր տանում: Գերմանական հրապարակայնության մասին եք խոսում, իմ գնահատականը շատ սուբյեկտիվ է. գերմանական հրապարակայնությունն իմ փրկությունն է: Գերմանիան ինձ հնարավորություն տվեց իմ լռությունը կոտրելու, իմ պատմությունը պատմելու: Գերմանիան թուրքերի համար պատմությունը վերանայել սովորելու վայր կարող է դառնալ: Սփյուռքը Թուրքիայի կոնֆլիկտային կեսն է: Սփյուռքն է պահպանել ցեղասպանության հիշողությունը: Հրանտ Դինքը նույնիսկ դեմ էր Սփյուռքին, բայց Սփյուռքն ունի Դինք եւ Միհրան Դաբաղ, սա թուրքերի խնդիրը չէ, հայերին վերաբերող խնդիր է», ասաց Դողան Ակհանլին:

Ջեմ Էոզդեմիրը բավական արագ դուրս եկավ դահլիճից: Բեմում նստած՝ գիտաժողովին ելույթ ունեցած մեզ արդեն ծանոթ բանախոսները լսարանի համար ամփոփեցին օրը ու... հրապարակային քննարկումը հայտարարվեց ավարտված: Լսարանի համար մեծ անակնկալ էր՝ հարց ունենալ, լուռ մնալը:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Բեռլին**

# «48 րոպե 56 վայրկյան»

Քաթարի «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությունը, համաձայն ադրբեջանական աղբյուրի, ներկայացրել է հաղորդում «Հարավային Կովկասի երկրների ռազմական կարողությունների մասին՝ հիմնված ՄԱԿ-ի տվյալների եւ ՆԱՏՕ-ի սպաների հաղորդած տեղեկությունների վրա»: Մի կողմ թողնենք, թե որտեղի՞ց ՆԱՏՕ-ի սպան կարող է մանրակրկիտ տեղեկություն ունենալ կոնկրետ Հայաստանի ռազմական կարողությունների մասին, ու շարունակենք: Ըստ այդմ՝ պարզվել է. «Ադրբեջանի տարեկան ռազմական բյուջեն կազմում է ավելի քան երեք միլիարդ դոլար: Այդ երկրի ռազմաօդային պաշտպանության բազայում առկա են կործանիչներ, հակաօդային պաշտպանության համակարգում 4 զենիթա-հրթիռային բրիգադներ, մեկ՝ զենիթա-հրթիռային գունդ, ռադիոտեխնիկական գումարտակի երկու ստորաբաժանումներ»: Այս բոլորը, ինչպես նաեւ Ադրբեջանի ռազմաօդային պաշտպանության համակարգում այսօր ծառայող 9000-անոց կազմը հիմք են տվել ՆԱՏՕ-ի սպաներին «Ալ Ջազիրա»-ի եթերից հայտարարել. «Ադրբեջանը ունակ է ոչնչացնել ոչ միայն Հայաստանը, այլեւ ամբողջ Հարավային Կովկասը ընդամենը 48 րոպե 56 վայրկյան ժամանակահատվածում»: Անշուշտ, ՆԱՏՕ-ի սպաները, իրենց հետ նաեւ «Ալ Ջազիրա»-ին մեջբերող ադրբեջանական աղբյուրները բավական երկար ժամանակ են ծախսել՝ Հարավային Կովկասը Ադրբեջանի ձեռամբ ոչնչանալու ստույգ ժամանակը պարզելու համար, հետեւաբար մենք զերծ մնանք մեկնաբանություններից, փոխարենը հիշեցնենք ռուս հայտնի լրագրող, փորձագետ Մաքսիմ Յուսինի՝ «Վզգլյադ» պարբերականում հրապարակված հոդվածը «Ադրբեջանը կսկսի պատերազմը եւ կպարտվի» խորագրով: Արձանագրելով, որ «իհարկե, տնտեսական տեսանկյունից Ադրբեջանը Հայաստանից շահեկանորեն տարբերվում է, ու ռազմական կարիքների համար Բաքուն ավելի շատ միջոցներ կարող է հատկացնել», Յուսինը այդուհանդերձ փաստում է. «Եթե Ադրբեջանը սկսի պատերազմ, ու եթե դրան այլ պետություններ չմիջամտեն, նա կրկին պարտություն կկրի: Իսկ որպեսզի որեւէ այլ պետություն չմիջամտի, կհոգա Ռուսաստանը, քանի որ Հայաստանը մեր ամենահուսալի դաշնակիցն է Անդրկովկասում եւ Հայաստանի ռազմական պարտությունը, նրա դիրքերի թուլացումը Անդրկովկասում, Ռուսաստանի ծրագրերի մեջ չեն մտնում»: Միեւնույն ժամանակ ռուս փորձագետը այլ հարցեր էլ էր հնչեցրել՝ ընդ որում ապահովելով նաեւ դրանց պատասխանները: Այսպես՝ Յուսինը «դժվար հավատալի է» համարում, թե «ադրբեջանցի զինվորը կարո՞ղ է արդարացնել ժողովրդի, երկրի ղեկավարության հույսերը»: «Պատերազմում ամեն ինչ չէ, որ որոշվում է զինված ուժերի քանակով: Թե որքան բարձր է հայերի մարտական ոգին, որքան կարգապահ են նրանք, ես համոզվել եմ 1992-ին Ղարաբաղում: Տեսել եմ նաեւ ադրբեջանցի զինվորներին՝ համեմատությունն ակնհայտորեն նրանց օգտին չէ: Իհարկե, այդ ժամանակներից հետո շատ ջրեր են հոսել, Ադրբեջանը վերակառուցել է իր բանակը՝ փառք Աստծո, նավթադոլարները բավարար են: Սակայն մարտական ոգին, կարգապահությունը, ռազմագիտությունը գնել անհնար է: Իսկ մարտական պատրաստվածության տեսանկյունից հայկական ստորաբաժանումները բազմիցս գերազանցում են հակառակորդին»: Այդուհանդերձ ռուս փորձագետը մեջբերում է ԱՄՆ արտաքին քաղաքականության խորհրդի փորձագետ Ուեյն Մերիի կարծիքը. «Գաղտնիք չէ, որ հայերը բանակ ունեն, իսկ Ադրբեջանը՝ զինված ուժեր»:

Ահա եւ «նատօ-ալջազիրա-ադրբեջանական» 48 րոպե 56 վայրկյանի պատասխանը, հուսանք, այս պատասխանը նույնպես՝ «Ալ Ջազիրան ու ՆԱՏՕ-ի սպաները» կներկայացնեն ադրբեջանական ԶԼՄ-ներին:

Հ. ԱՓՅԱՆ

# Բրիտանացի նախարարին քննադատում են գեր մարդկանց տված խորհրդի համար



Մեծ Բրիտանիայի առողջապահության նախարար Էնդրյու Լենսլին երկրում քննադատությունների ալիք է առաջացրել իր այն խոսքերի պատճառով, թե ճարպակալած մարդիկ պետք է քիչ ուտեն, եթե ուզում են նիհարել: Բացի դրանից, նախարարը հավանություն չի տվել սննդարդյունաբերության վրա պետական հսկողություն սահմանելու գաղափարին:

Այսօր Մեծ Բրիտանիայում լրջորեն մտահոգված են մարդկանց ճարպակալման խնդրով: Գիտնականների հաշվարկների համաձայն, եթե ներկայիս միտումը պահպանվի, ապա 2030-ին 26 մլն բրիտանացիներ կտառապեն գիրությունից: Երկրի առողջապահության նախարարության տվյալներով, Միացյալ Թագավորության բնակիչները միջին հաշվով 10 տոկոսով ավելի շատ կալորիա են ստանում, քան անհրաժեշտ է:

Տվյալ ոլորտում այսօր վատթարագույն արդյունքները ցուցադրում են երեխաներն ու դեռահասները, որոնք հիվանդանոցներում առաջվանից 50 տոկոսով շատ ժամանակ են անցկացնում: Դրա հետեւանքով մեծացվում է առողջապահությանը հատկացվող բյուջեն:

Եթե բրիտանացիների մի մասը նախարարի խոսքերը գնահատեց որպես ողջախոհության դրսեւորում, ապա սպառողական կազմակերպությունները եւ բարեգործական հիմնադրամները նրա ելույթն անվանեցին «շփոթեցնող եւ անտեղի»:

Մասնավորապես Առողջապահության բրիտանական հիմնադրամի ղեկավար, դոկտոր Մայք Նեպտոնը համոզված է, որ ճարպակալումը չափազանց լուրջ խնդիր է, որի լուծումը հարկավոր է փնտրել սննդարդյունաբերության բարեփոխման մեջ: Սննդամթերքներ եւ ըմպելիքներ արտադրողները, նրա կարծիքով, պարտավոր են օրենսդրական կարգով նվազեցնել ճարպի եւ շաքարի քանակը իրենց արտադրանքի մեջ:

# ԱՄՆ-ը հույն անարխիստներին կհամարի ահաբեկչական կազմակերպություն

Պայթուցիկ ծանրոցների առաքում կազմակերպած հույն անարխիստների «Հրե բջիջների դավադրություն» խմբավորումը ԱՄՆ-ում մտցվել է ահաբեկչական կազմակերպությունների ցանկի մեջ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Պետդեպարտամենտը գտնում է, որ խմբավորումը պատասխանատվություն է կրում Հունաստանում եւ այլ երկրներում կառավարության անդամների վրա կազմակերպված մի շարք գրոհների համար:

ԱՄՆ տարածքում խմբավորման անդամների բոլոր հաշիվները կսառեցվեն, իսկ ամերիկացիները իրավունք չեն ունենա օգնելու խմբավորմանը:

Հուլիսին Հունաստանի դատարանը բանտարկեց խմբավորման 6 անդամների: Անարխիստական խմբավորումը հայտնի է նաեւ նրանով, որ 2010-ի վերջերին ինքնաշեն ռումբերով ծանրոցներ էր առաքել որոշ պետությունների դեսպանատներ, ինչպես նաեւ օտարերկրացի որոշ ղեկավարների: Մասնավորապես պայթուցիկ ծանրոցներ էին ստացվել Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի աշխատակազմում, Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի գրասենյակում:

2010-ի նոյեմբերին Աթենքում պայթյուններ տեղի ունեցան Շվեյցարիայի եւ Ռուսաստանի դեսպանատների մոտ: Հունաստանի հատուկ ծառայություններին հաջողվեց կալանել պայթուցիկ սարքերով 3 փաթեթ, որոնք նախատեսված էին Բելգիայի եւ Հոլանդիայի դեսպանատների, ինչպես նաեւ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի համար:

Սկզբնական շրջանում այդ անարխիստական խմբավորումը մասնագիտացել էր հրկիզումների մեջ, բայց 2009-ի մայիսից հետո դրա ակտիվիստները սկսել էին փոքր հզորության ռումբեր օգտագործել Հունաստանի պետական մարմինների շենքերի մոտ պայթյունների կազմակերպման համար:

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ռուսաստանը հակահրթիռային համակարգին կպատասխանի «էժան, բայց արդյունավետ» միջոցներով



**Ռուսաստանն սկսել է ռազմատեխնիկական միջոցառումներ նախապատրաստել ի պատասխան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղաբաշխման: Այդ մասին հաղորդում է «Կոմերսանտ» թերթը:**

**Կրեմլի բարձրաստիճան աղբյուրներից մեկը թերթին հայտնել է, որ ՌԴ իշխանություններն արդեն «ընդհանուր պատկերացում ունեն, թե ինչ պետք է անել»: «Մեր պատասխանը կլինի էժան, բայց չափազանց արդյունավետ», ընդգծել է պաշտոնյան:**

**Թե կոնկրետ ինչի մասին է խոսքը, նա չի մանրամասնել: Սակայն հոկտեմբերի սկզբներին Կրեմլում թերթի աղբյուրներից մեկը հայտարարել էր, որ հակահրթիռային պաշտպանության համակարգին նվիրված բանակցությունների ձախողումից հետո Մոսկվային մնում է երկու ելք՝ ստեղծել սեփական հակահրթիռային համակարգ կամ մեծացնել միջուկային ներուժը:**

**«Կոմերսանտի» զրուցակիցը Կրեմլի որոշումը բացատրել է նրանով, որ ամերիկացիները Եվրոպայում հակահրթիռային համակարգ տեղադրելիս հաշվի չեն առնում Ռուսաստանի կարծիքը: Մոսկվան մտահոգ է, որ տվյալ հարցին առնչվող ամեն տեսակ համաձայնագրերը կարող են վերանայվել Բարաք Օբամայի պաշտոնաթողությունից հետո:**

**Ռուսաստանում ԱՄՆ ապագա դեսպան Մայքլ Մակֆոլը հոկտեմբերի 12-ին Սենատում կայացած լսումների ժամանակ հայտարարեց, թե հակահրթիռային պաշտպանության համակարգին առնչվող բանակցությունները բախվել են անհաղթահարելի տարաձայնությունների: Մասնավորապես ԱՄՆ-ը պատրաստ չէ իրավաբանական երաշխիքներ տալ, թե Եվրոպայում ամերիկյան օբյեկտները չեն օգտագործվի ՌԴ միջուկային ուժերի դեմ:**

**Ավելի վաղ ենթադրվում էր, որ Օբաման եւ Մեդվեդեւը հիշյալ երաշխիքների վերաբերյալ համաձայնագիր կստորագրեն 2012-ի մայիսին Ռուսաստան-ՆԱՏՕ գագաթաժողովում: «Կոմերսանտի» դիվանագիտական աղբյուրի տվյալներով, Պենտագոնը եւ ԿՀՎ-ն Օբամային համոզել են չստորագրել այդ փաստաթուղթը:**

**ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանության համակարգը Եվրոպայում կգործի 2012-ից: Համակարգն ամբողջությամբ կծավալվի մինչեւ 2018 թվականը:**

# Օբաման Իրանին մեկուսացնելու կոչ է անում

ԱՄՆ նախագահի Բարաք Օբաման միջազգային ընկերակցությանը կոչ է արել լրացուցիչ միջոցներ ձեռնարկել Իրանին մեկուսացնելու նպատակով:

Օբամայի խոսքերով՝ ԱՄՆ-ը դաշնակիցներին փոխանցում է ապացույցներ, որ Իրանը մեղսակից է ԱՄՆ-ում սաուդցի դեսպանի սպանության նպատակով դավադրության. ինչպես նաեւ սաուդյան եւ իսրայելական դեսպանատների մոտ պայթյունների կազմակերպման փորձերին: Այդ մասին հաղորդում է «Ուոլ սթրիթ ջոռնըլ» թերթը:

Ըստ Օբամայի, ամերիկացիներն իրենց մերձավորարեւելյան դաշնակիցներին պետք է համոզեն, որ Իրանի վարքագիծը վտանգավոր է եւ դուրս է ընդունված միջազգային նորմերի շրջանակներից:

Նախագահի պնդմամբ՝ Իրանի քաղաքական ղեկավարությունը, եթե նույնիսկ տեղեկացված էլ չի եղել գաղտնի գործողության մանրամասնություններին, դարձյալ ստիպված կլինի պատասխան տալ այդ ձախողված դավադրության համար:

Միաժամանակ հաղորդվում է, որ ԱՄՆ-ում քննարկվում է Իրանի Կենտրոնական բանկի դեմ պատժամիջոցների ձեռնարկման հնարավորությունը: Սենատում երեկվա լսումների ժամանակ այդ մասին հայտարարել է ֆինանսների փոխնախարար Դեւիդ Քոենը, որը զբաղվում է ահաբեկչության ֆինանսավորման դեմ մղվող պայքարի հարցերով:

# Սլովակիան ի վերջո ընդունեց ԵՄ հակաճգնաժամային ծրագիրը

Սլովակիայի խորհրդարանը քվեարկել է 2012-ի մարտին վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու օգտին: Այսպիսով պատգամավորները կատարել են ընդդիմության պահանջը, եւ հիմա ընդդիմությունը պատրաստ է քվեարկել եվրոգոտու կայունացման հիմնադրամի կրկնակի ընդլայնման օգտին:

Բլումբերգ գործակալության վերջին տեղեկությունների համաձայն, Սլովակիայի խորհրդարանն արդեն քվեարկել է հիմնադրամի ընդլայնման օգտին: Դա Եվրոմիության հակաճգնաժամային ծրագիրն է, որն արդեն ընդունվել է եվրոգոտու բոլոր 17 պետություններում: Ծրագրի ընդունումը պետք է նպաստի ԵՄ պարտքային ճգնաժամի հաղթահարմանը:

«**Ազգը**» գրել էր Սլովակիայի խորհրդարանի հոկտեմբերի 12-ի նիստի մասին, երբ պատգամավորները մերժել էին ԵՄ հակաճգնաժամային ծրագիրը, իսկ ընդդիմությունը պահանջել էր վարչապետի հրաժարականը եւ խոստացել էր ծրագրի օգտին քվեարկել վարչապետի հրաժարականի եւ վաղաժամկետ ընտրությունների անցկացման դեպքում:

Սլովակիայում ԵՄ հակաճգնաժամային ծրագրի վավերացման հակառակորդները պնդում էին, թե ծրագրին երկրի մասնակցության չափը չի համապատասխանում Սլովակիայի տնտեսական զարգացման մակարդակին, մինչդեռ հիմնադրամում երկրի բաժինը կազմում է ընդամենը 1 տոկոս:

**ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ**

# Առավել հաջողը Զավեն Անդրեասյանի ելույթն էր

Միխայիլ Չիգորինի հուշամրցաշարում ավարտվեց արագ շախմատի մրցաշարը: 134 մասնակիցների թվում Հայաստանը ներկայացնող 4 շախմատիստներից լավագույնը գրոսմայստեր Զավեն Անդրեասյանի արդյունքն էր, որը 5 միավորով գրավեց 43-րդ տեղը:

Մրցումների առաջին օրը Զավենը 5 հնարավորից 3 միավոր էր վաստակել: 2-րդ օրը նա 4 պարտիաներում 2 միավոր վաստակեց: 6-րդ տուրում հայ շախմատիստը հաղթեց Ազիզ Հուսեյին Նեզադին, ապա պարտվեց Վիտալի Շինկեւիչին: Ավարտական 2 պարտիաներում նա հաշտություն կնքեց Վլադիմիր Օնիշչուկի եւ Ալեքսեյ Իվանովի հետ:

Հովիկ Հայրապետյանը 4,5 միավորով գրավեց 66-րդ տեղը: Նա անհաջող անցկացրեց մրցումների 2-րդ հատվածը՝ վաստակելով ընդամենը 1,5 միավոր: Հովիկը հաղթեց Ալեքսանդր Յակիմենկոյին, ոչ-ոքի խաղաց Նիկիտա Հարչկոյի հետ, պարտություններ կրեց Վադիմ Մալախատկոյի եւ Անտոն Շոմոեւի հետ մրցավեճում:

Ավելի համեստ էին մեր մյուս 2 մասնակիցների արդյունքները: Վլադիմիր Պողոսյանը 3 միավորով գրավեց 112-րդ տեղը, իսկ Մարկ Բասենցյանը 2,5 միավորով 121-րդն էր:

Բոլորից հաջող հանդես եկան ռուսաստանցի Իգոր Կուռնոսովն ու ուկրաինացի Անտոն Կորոբովը, որոնք վաստակեցին 7,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով մրցաշարի հաղթող ճանաչվեց ուկրաինացի գրոսմայստերը:

Այժմ Չիգորինի հուշամրցաշարի մասնակիցները ուժերը կչափեն դասական շախմատի մրցախաղերում:

# Հերթական վարկանիշային մրցաշարը

Աբու Դաբիում մեկնարկում է ձյուդոյի Գրան պրիի հերթական խաղարկությունը: Այդ մրցումներին Հայաստանից կմասնակցեն 4 ձյուդոյիստներ՝ Հովհաննես Դավթյանը (60 կգ), Արմեն Նազարյանը (66 կգ), Գայանե Հարությունյանը (48 կգ) եւ Ժաննա Ստանկեւիչը (57 կգ): Նշենք, որ Դավթյանն ու Նազարյանը քաշային իրենց կարգերում դասակարգման ցուցակում զբաղեցնում են համապատասխանաբար 15-րդ եւ 16-րդ տեղերը ու լավ հնարավորություն ունեն օլիմպիական ուղեգրեր նվաճելու, քանի որ մրցաշարը վարկանիշային է: Նման հնարավորություն են պահպանում նաեւ Գայանե Հարությունյանն ու Ժաննա Ստանկեւիչը: Աբու Դաբիում նրանց գործողությունները կղեկավարի Հայաստանի ձյուդոյի հավաքականի գլխավոր մարզիչ, ռումինացի Ադրիան Կրիստորիուն:

# Ռինգ են մտնում կանայք

Վաղը Ռոտերդամում կմեկնարկի բռնցքամարտի Եվրոպայի կանանց առաջնությունը: Մրցումներին կմասնակցեն նաեւ Հայաստանի պատվիրակները՝ Հայկուհի Նահապետյանը (51 կգ), Կարինե Գեւորգյանը (57 կգ), Արմինե Սինադյանը (60 կգ) եւ Աշխեն Սիմոնյանը (75 կգ): Մարզուհիներին ռինգ կուղեկցեն վաստակավոր մարզիչ Սամվել Սողոմոնյանը եւ Արսեն Դավթյանը:

# Սամբիստները սկսում են մրցավեճը

Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում մեկնարկում է սամբոյի պատանիների, երիտասարդների եւ աղջիկների աշխարհի 2011-ի առաջնությունը: Հայաստանից մրցագորգ դուրս կգան 24 սամբիստներ: Պատվիրակությունը ղեկավարում է սամբոյի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Լեւոն Հայրապետյանը:

Հայ սամբիստները հաջող են հանդես գալիս միջազգային ամենաբարձր կարգի մրցումներում: Անցած տարի Թբիլիսիում կայացած աշխարհի առաջնությունում հայ սամբիստները նվաճել էին 6 մեդալ: Աշխարհի չեմպիոն էր հռչակվել Գրիգոր Մխիթարյանը (48 կգ), արծաթե մեդալներ էին նվաճել Ալբերտ Քարհանյանն (74 կգ) ու Ռուդոլֆ Ոսկանյանը (87 կգ), իսկ Գոռ Մալյանը (52 կգ), Միհեր Կարապետյանը (75 կգ) եւ Գարեգին Խաչատրյանը (90 կգ) դարձել էին բրոնզե մրցանակակիրներ:

# Մարտական ոչ-ոքի

Երեկ կայացավ «Փյունիկ»-«Իմպուլս» հանդիպման վերախաղարկումը: Խաղասկզբում Նորայր Գյոզալյանի խփած 2 գոլերի շնորհիվ «Իմպուլսն» առջեւում էր: Հետագայում փյունիկցիներ Ղուկաս Պողոսյանն ու Հովհաննես Հովհաննիսյանը վերականգնեցին հավասարակշռությունը:

# Ռունին որակազրկվեց 3 խաղով

ՈՒԵՖԱ-ի կարգապահական կոմիտեն 3 խաղով որակազրկել է Անգլիայի հավաքականի հարձակվող Ուեյն Ռունիին, որը Չեռնոգորիայի հետ ընտրական մրցախաղում դաշտից հեռացվել էր: Այսպիսով, Ռունին կզրկվի Եվրո-2012-ի եզրափակիչ փուլի խմբային մրցաշարի բոլոր 3 հանդիպումներին մասնակցելու իրավունքից:

Չեռնոգորիայի հավաքականի հետ խաղի 73-րդ րոպեին պաշտպան Միոդրագ Ջուդովիչի հետ մենամարտում զիջելով վերջինիս, Ռունին հարվածեց մրցակցի ոտքին ու անմիջապես հեռացվեց դաշտից: Այդ արարքը հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելոն հիմարություն է համարել Ռունիի կողմից:

Հետաքրքրական է, որ Ջուդովիչը բնավ էլ չի մեղադրում Ռունիին այդ միջադեպի համար: Նա նշել է, որ Ռունին անմիջապես ներողություն է խնդրել իրենից, իսկ կարմիր քարտը ստանալով, առանց վիճաբանության, թողել է խաղադաշտը: Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիան 3 օրվա ընթացքում կարող է բողոքարկել ՈՒԵՖԱ-ի վճիռը:

# 100-ամյա Սինգխը կմասնակցի մարաթոնյան վազքին

Կիրակի օրը կայանալիք Տորոնտոյի մարաթոնյան վազքի 5 հազար մասնակիցների թվում կլինի բրիտանացի Ֆաուջա Սինգխը: Եթե նրան հաջողվի հատել վերջնագիծը, ապա կդառնա աշխարհում առաջինը, որը 100 տարեկանում հաղթահարել է մարաթոնյան վազքի մրցատարածությունը: Այդ նվաճումը կգրանցվի Գինեսի ռեկորդների գրքում:

Սինգխը ծնվել է 1911-ին Հնդկաստանում եւ բրիտանական քաղաքացիություն ունի: 2003-ին նա յուրօրինակ ռեկորդ սահմանեց 90-ից բարձր տարիքի մարզիկների համար՝ 42 կմ 195 մետր մրցատարածությունը հաղթահարելով 5 ժամ 40,01 րոպեում:

Դա Սինգխի առայժմ վերջին մրցումն էր, ուստի նրա մարզչի կարծիքով 100-ամյա մարզիկին դժվար կլինի հասնել վերջնագծին: Ճիշտ է, օրերս Սինգխը հաջողությամբ հաղթահարել էր 5 կմ մրցատարածությունը: Սինգխի երկարակեցության գաղտնիքը նրա յուրօրինակ կերակրառեժիմն է: Նա օգտագործում է միայն թեյ, տապակած հաց եւ բանջարեղեն: Մասնակցելով Տորոնտոյի մարաթոնին, Սինգխը մտադիր է հանգանակություն կազմակերպել՝ աղքատ ընտանիքների երեխաներին օգնելու նպատակով:

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան | Հաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 394,237 | 446 | 969,389 | 876 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | (21,855) | - | (28,549) | - |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **372,382** | **446** | **940,840** | **876** |
| Կոմիսիոն եւ նմանատիպ վճարների տեսքով ծախսեր | (3,684) | - | (3,684) | - |
| Արտարժութային գործարքներից զուտ շահույթ/(վնաս) | (284) | - | (154) | - |
| Այլ գործառնական եկամուտներ | 54,469 | - | 162,084 | - |
| Այլ գործառնական ծախսեր | (4,190) | - | (11,073) | - |
| Անտոկոս փոխառության զեղչումից եկամուտ | (178,931) | - | 1,106,838 | - |
| **Զուտ կոմիսիոն եւ այլ եկամուտ** | **239,762** | **446** | **2,194,852** | **876** |
| Վարկերից եւ այլ փոխառություններից առաջացած կորուստներ | 28,209 | (1,802) | (214,833) | (1,802) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (129,325) | (378) | (358,151) | (378) |
| **Շահույթ մինչեւ հարկումը** | **138,646** | **(1,734)** | **1,621,867** | **(1,304)** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 9,485 | - | 25,936 | - |
| **Ժամանակաշրջանի Շահույթ** | **129,161** | **(1,734)** | **1,595,931** | **(1,304)** |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*
*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Սեպտեմբերի 30 դրությամբ**

*Հազար ՀՀ դրամ*

| | | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա վերջ |
|---|---|---|---|
| 1 | **Ակտիվներ** | | |
| | Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 753,524 | 458,885 |
| | Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 1,804,990 | - |
| | Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 2,540,816 | 2,407,608 |
| | Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 39,098 | 7,752 |
| | Ստացվելիք տոկոսներ | 42,349 | 22,449 |
| | Այլ ակտիվներ | 34,702 | 2,201 |
| | **Ընդամենը՝ ակտիվներ** | **5,215,479** | **2,898,895** |
| 2 | **Պարտավորություններ** | | |
| | Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ | 1,190,560 | 181,078 |
| | Հաճախորդներից ստացված փոխառություններ | 1,159,863 | - |
| | Հետաձգված հարկային պարտավորություններ | 1,288 | 823 |
| | Վճարվելիք տոկոսներ | 28,646 | - |
| | Այլ պարտավորություններ | 213,613 | 2,011,416 |
| | **Ընդամենը պարտավորություններ** | **2,593,970** | **2,193,317** |
| 3 | **Կապիտալ** | | |
| | Կանոնադրական կապիտալ | 500,000 | 180,000 |
| | Կուտակված շահույթ | 2,121,509 | 525,578 |
| | **Ընդամենը կապիտալ** | **2,621,509** | **705,578** |
| | **Ընդամենը պարտավորություններ եւ կապիտալ** | **5,215,479** | **2,898,895** |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*
*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| **1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից** | **(1,166,511)** | **876** |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը** | 720,485 | 876 |
| Ստացված տոկոսներ | 900,448 | 876 |
| Վճարված տոկոսներ | - | - |
| Ստացված զուտ կոմիսիոն եւ նմանատիպ գումարներ | 158,051 | - |
| Ստացված տույժեր տուգանքներ | 3,972 | |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (197,286) | - |
| Վճարված հարկեր | (144,700) | |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից** | **(1,886,996)** | **-** |
| Հաճախորդներին տրամադրված վարկերի նվազում (ավելացում) | (2,159,446) | - |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | 272,450 | - |
| **2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | **(39,192)** | **(3,705)** |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | - | |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (39,192) | (3,705) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների օտարում | - | - |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | - | - |
| **3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **1,502,724** | **180,000** |
| Վճարված շահաբաժիններ | - | |
| Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում) | - | |
| Այլ փոխատուներից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | 1,502,724 | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում | - | 180,000 |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | - | |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | (2,382) | |
| **Դրամական միջոցների զուտ հոսք** | **294,639** | **177,171** |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 458,885 | - |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 753,524 | 177,171 |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*
*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն**
**2011թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| Նորմատիվներ | Փաստացի մեծությունը | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 500,000 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 2,526,049 | 150,000 | խախտում առկա չէ |

"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊ ընկերությունը իր կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չի ներգրավում, հետեւաբար մնացած հիմնական տնտեսական նորմատիվները "Կամուրջ" ՈՒՎԿ ՍՊԸ վրա չեն տարածվում:

**Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան**
**Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան**

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Կանոնադրական կապիտալ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանոնադրական կապիտալ | Հետ գնված կապիտալ | Զուտ գումարը | Չբաշխված շահույթ/վնաս | Ընդամենը | Չվերահսկող բաժնեմաս | Ընդամենը կապիտալ |
| *Նախորդ ժամանակաշրջան* | | | | | | | |
| Մնացորդը առ 2009թ. Դեկտեմբերի 31 | | | | | | | |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 180,000 | | | | 180,000 | | 180,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 180,000 | | | | 180,000 | | 180,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 525,578 | 525,578 | | 525,578 |
| Շահութաբաժիններ | | | | | | | |
| Մնացորդը առ 2010թ. Դեկտեմբերի 31 | 180,000 | | | 525,578 | 525,578 | | 705,578 |
| *Հաշվետու ժամանակաշրջան* | | | | | | | |
| Մնացորդը առ 2010թ. Դեկտեմբերի 31 | 180,000 | | | 525,578 | 525,578 | | 705,578 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 320,000 | | | | 320,000 | | 320,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 320,000 | | | | 320,000 | | 320,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 1,595,931 | 1,595,931 | | 1,595,931 |
| Շահութաբաժիններ | | | | | | | |
| Մնացորդը առ 2011թ. Հունիսի 30 | 500,000 | | | 2,121,509 | 2,441,509 | | 2,621,509 |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*
*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

ARMSWISSBANK
Private & Investment Banking

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 90, այդ թվում ստասարկող անձնակազմը՝ 7:

Բանկի ինտերնետի տնային էջի հասցեն է՝ www.armswissbank.am, որտեղ գտնվում են բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթը (ներառյալ՝ կից ծանոթագրությունները), բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց և բանկի ղեկավարների, ինչպես նաև բանկի կողմից մատուցվող ծառայությունների և սակագների վերաբերյալ տեղեկությունները:

Բանկի ֆինանսական հաշվետվությունները կազմված են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համաձայն:

### ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**ֆինանսական վիճակի մասին (ձև թիվ 7)**
**« 30 » սեպտեմբերի 2011թ.**
**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ 0010 f. Երևան, Վ. Սարգսյան 10**

*(հազար դրամ)*

| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթա-գրու-թյուններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) |
|---|---|---|---|---|
| 1 | Ակտիվներ | | | |
| 1.1 | Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 13 | 3,563,440 | 4,040,968 |
| 1.2 | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ | | 411,486 | 153,785 |
| 1.3 | "Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ" | 14 | 1,290,521 | 4,389,085 |
| 1.4 | Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ | 15 | | |
| 1.5 | Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ | 16 | 18,682,279 | 13,034,621 |
| 1.6 | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 17 | 14,520,309 | 12,667,992 |
| 1.7 | Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | 18 | | |
| 1.8 | Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում | 19 | | |
| 1.9 | Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| 1.10 | Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 20 | 673,955 | 670,222 |
| 1.11 | Հետաձգված հարկային ակտիվներ | 21, 3 | 94,175 | 16,306 |
| 1.12 | Այլ ակտիվներ | 22 | 223,573 | 191,233 |
| | **Ընդամենը՝ ակտիվներ** | | **39,459,738** | **35,164,212** |
| 2 | Պարտավորություններ | | | |
| 2.1 | Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 23 | 15,344,224 | 13,608,871 |
| 2.2 | Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 24 | 14,085,801 | 12,313,526 |
| 2.3 | Բանկի կողմից թողարկված արժեթղթեր | 25 | | |
| 2.4 | Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն | 26 | | |
| 2.5 | Վճարվելիք գումարներ | 27 | | |
| 2.6 | Հետաձգված հարկային պարտավորություններ | 28,3 | | |
| 2.7 | Պահուստներ | 34 | | |
| 2.8 | Այլ պարտավորություններ | 29 | 208,967 | 212,047 |
| | **Ընդամենը՝ պարտավորություններ** | | **29,638,992** | **26,134,444** |
| 3 | Կապիտալ | | | |
| 3.1 | Կանոնադրական կապիտալ | 30 | 7,002,000 | 7,002,000 |
| 3.2 | Էմիսիոն եկամուտ | 31 | | |
| 3.3 | Պահուստներ՝ | | 1,138,994 | 355,341 |
| 3.3.1 | Գլխավոր պահուստ | | 1,000,000 | 500,000 |
| 3.3.2 | Վերագնահատման պահուստներ | 32 | 138,994 | (144,659) |
| 3.4 | Չբաշխված շահույթ (վնաս) | 33 | 1,679,752 | 1,672,427 |
| 3.5 | Կապիտալի այլ տարրեր | 32 | | |
| | Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ | | | |
| | Փոքրամասնության բաժնեմաս | | | |
| | **Ընդամենը՝ կապիտալ** | | **9,820,746** | **9,029,768** |
| | **Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ** | | **39,459,738** | **35,164,212** |

*Հաշվետվության վավերացման ամսաթիվը* *13.10.2011թ.*

*Բանկի վարչության նախագահ Գ. Մաչանյան (գործադիր տնօրեն)*

*Գլխավոր հաշվապահ* *Ս. Բաղդասարյան*

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9)**
**«30» սեպտեմբերի 2011թ**
**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ, 0010 f. Երևան, Վ. Սարգսյան 10**

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթագրություն | Նախորդ ժամանակաշրջան | Հաշվետու ժամանակաշրջան |
|---|---|---|---|
| **1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | **x** | **x** |
| ***Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը*** | | 725,331 | 758,646 |
| Ստացված տոկոսներ | | 2,239,878 | 2,898,083 |
| Վճարված տոկոսներ | | (1,163,531) | (1,475,343) |
| Ստացված կոմիսիոն գումարներ | | 82,878 | 122,460 |
| Վճարված կոմիսիոն գումարներ | | (19,700) | (21,447) |
| Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս) | | 35,025 | 55,715 |
| Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս) | | 74,455 | 71,224 |
| Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ | | 161,049 | 61,955 |
| Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | | (314,660) | (343,250) |
| Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր | | (370,063) | (610,751) |
| ***Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից*** | | **(1,719,577)** | **(3,191,354)** |
| **Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)** | | **(2,996,598)** | **(5,039,376)** |
| այդ թվում՝ | | | |
| վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում) | | (3,349,934) | (4,149,245) |
| առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում) | | 865,074 | (1,624,681) |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում) | | | |
| այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում) | | (511,738) | 734,550 |
| Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում) | | 1,277,021 | 1,848,022 |
| այդ թվում՝ | | | |
| հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում) | | 1,484,532 | 1,669,668 |
| այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում) | | (207,511) | 178,354 |
| **Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը** | | **(994,246)** | **(2,432,708)** |
| Վճարված շահութահարկ | | (120,000) | (268,097) |
| **Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | **(1,114,246)** | **(2,700,805)** |
| 2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից | | x | x |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | | | |
| Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում) | | | |
| Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում) | | | |
| Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում) | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (13,303) | (50,633) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում | | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | | | |
| **Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | **(13,303)** | **(50,633)** |
| **3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | **x** | **x** |
| Վճարված շահաբաժիններ | | 4,107 | 16,193 |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | | (1,800,119) | (582,957) |
| Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | | 2,982,849 | 855,745 |
| Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում) | | 605,335 | 1,006,664 |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում) | | | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում | | | |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում) | | | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | | | |
| **Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | **1,792,172** | **1,295,645** |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | (33,979) | 87,971 |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)** | | **630,644** | **(1,367,822)** |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում** | | **3,684,284** | **5,476,026** |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում** | | **4,314,928** | **4,108,204** |

*Հաշվետվության վավերացման ամսաթիվը* *13.10.2011թ.*

*Բանկի վարչության նախագահ Գ. Մաչանյան (գործադիր տնօրեն)*

*Գլխավոր հաշվապահ* *Ս. Բաղդասարյան*

### ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6)**
**« 30 » սեպտեմբերի 2011թ.**
**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ, 0010 f. Երևան, Վ. Սարգսյան 10**

*(հազար դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Ծանոթա-գրու-թյուններ | Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) | Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան | Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական) |
|---|---|---|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 3 | 1,104,075 | 3,048,141 | 802,038 | 2,400,971 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | 3 | (521,205) | (1,436,563) | (389,839) | (1,243,850) |
| **Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ** | | **582,870** | **1,611,578** | **412,199** | **1,157,121** |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 4 | 23,768 | 69,738 | 19,537 | 57,123 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | 4 | (7,346) | (21,447) | (7,693) | (19,799) |
| **Ստացված զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ** | | **16,422** | **48,291** | **11,844** | **37,324** |
| Եկամուտ շահաբաժիններից | | 76 | 16,193 | 36 | 4,107 |
| Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից | 5 | (5,159) | 79,490 | 38,212 | 109,937 |
| Այլ գործառնական եկամուտներ | 6 | 12,443 | 38,605 | 15,843 | 42,167 |
| **Գործառնական եկամուտներ** | | **606,652** | **1,794,157** | **478,134** | **1,350,656** |
| "Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին" | 7 | (131,322) | (560,908) | (227,271) | (200,206) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | 8 | (204,523) | (506,546) | (174,293) | (467,055) |
| Այլ գործառնական ծախսեր | 9 | (29,677) | (84,378) | (22,348) | (69,723) |
| Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս | 10 | | | | |
| **Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը** | | **241,130** | **642,325** | **54,222** | **613,672** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 11 | (55,000) | (135,000) | (15,000) | (120,000) |
| **Շահույթը (վնասը) հարկումից հետո** | | **186,130** | **507,325** | **39,222** | **493,672** |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | 12 | | | | |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | 12 | | | | |
| **Ժամանակաշրջանի զուտ շահույթ** | | **186,130** | **507,325** | **39,222** | **493,672** |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ | | 507,700 | 354,566 | (153,700) | (151,050) |
| Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ | | (101,540) | (70,913) | 30,740 | 30,210 |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո** | | **406,160** | **283,653** | **(122,960)** | **(120,840)** |
| **Համապարփակ ֆինանսական արդյունք** | | **592,290** | **790,978** | **(83,738)** | **372,832** |

*Հաշվետվության վավերացման ամսաթիվը* *13.10.2011թ.*

*Բանկի վարչության նախագահ Գ. Մաչանյան (գործադիր տնօրեն)*

*Գլխավոր հաշվապահ* *Ս. Բաղդասարյան*

### ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)**
**« 30 » սեպտեմբերի 2011թ.**
**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ, 0010 f. Երևան, Վ. Սարգսյան 10**

*(հազար դրամ)*

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ: Կանոնադրական կապիտալ | Կանոնադրական կապիտալ: Հետ գնված կապիտալ | Կանոնադրական կապիտալ: Զուտ գումարը | Էմիսիոն եկամուտ/վնաս | Գլխավոր պահուստ | Փոխարժեքային տարբերություններ արտասահմանյան գործառնությունների վերահաշվարկից | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ | Դրամական հոսքերի հեջավորում | Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ | Չբաշխված շահույթ/վնաս | Միջանկյալ շահութաբաժիններ | Ընդամենը | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Հոդվածներ** | **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** | **10** | **11** | **12** | **13** | **14** |
| **Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)** | | | | | | | | | | | | | | |
| 1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2010թ. (ստուգված) | 7,002,000 | | | | 200,000 | | (151,998) | | | 1,019,436 | | | | 8,069,438 |
| 1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | | | | |
| 2. Վերահաշվարկված մնացորդը | 7,002,000 | | | | 200,000 | | (151,998) | | | 1,019,436 | | | | 8,069,438 |
| 3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ | | | | | | | | | | | | | | |
| 3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | | | | |
| 4. Համապարփակ եկամուտ | | | | | | | (120,840) | | | 493,672 | | | | 372,832 |
| 5. Շահութաբաժիններ | | | | | | | | | | | | | | |
| 6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | | | | |
| 7. Ներքին շարժեր, այդ թվում՝ | | | | | 300,000 | | | | | (300,000) | | | | |
| 7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | 300,000 | | | | | (300,000) | | | | |
| 7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 7.3. էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | | | | | | |
| 7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | | | | | | | | |
| 8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբերի 2010թ. (չստուգված) | 7,002,000 | | | | 500,000 | | (272,838) | | | 1,213,108 | | | | 8,442,270 |
| **Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)** | | | | | | | | | | | | | | |
| ***9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2011թ. (ստուգված)*** | 7,002,000 | | | | 500,000 | | (144,659) | | | 1,672,427 | | | | 9,029,768 |
| 9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | | | | |
| 10.Վերահաշվարկված մնացորդը | 7,002,000 | | | | 500,000 | | (144,659) | | | 1,672,427 | | | | 9,029,768 |
| 11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ | | | | | | | | | | | | | | |
| 11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | | | | |
| 12. Համապարփակ եկամուտ | | | | | | | 283,653 | | | 507,325 | | | | 790,978 |
| 13. Շահութաբաժիններ | | | | | | | | | | | | | | |
| 14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | | | | |
| 15. Ներքին շարժեր, այդ թվում՝ | | | | | 500,000 | | | | | (500,000) | | | | |
| 15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | 500,000 | | | | | (500,000) | | | | |
| 15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 15.3. էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | | | | | | |
| 15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | | | | | | | | |
| 16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30 սեպտեմբերի 2011թ. (չստուգված) | 7,002,000 | | | | 1,000,000 | | 138,994 | | | 1,679,752 | | | | 9,820,746 |

*Հաշվետվության վավերացման ամսաթիվը* *13.10.2011թ.*

*Բանկի վարչության նախագահ Գ. Մաչանյան (գործադիր տնօրեն)*

*Գլխավոր հաշվապահ* *Ս. Բաղդասարյան*

**Վաճառվում է**

**Daewoo Matiz Best**

մակնիշի ավտոմեքենա 2008 թ.,
շարժիչը 1լ,
վազքը՝ 4 300 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ,
հայելիները եւ ապակիները էլեկտր.,
գերազանց վիճակ է:

**Հեռ.՝ (094) 577-578**

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում շարունակվում է Ռուսաստանի Դաշնության արտադրության 913038 հաս մեկ լիտրանոց շշերով «Միլորա» ռաֆինացված արեւածաղկի ձեթի աճուրդային վաճառքը՝ դասական եղանակով, մեկ շիշը՝ 600 ՀՀ դրամ մեկնարկային գնով: Ձեթի պիտանելիության ժամկետը մինչեւ 2012թ սեպտեմբեր: Նշված ֆանակը տրոհված է 21 լոտի՝ յուրաքանչյուրը 43478 շիշ:

Աճուրդն իրականացվելու է 20.10.2011թ-ին ժ.12.00 f. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել www.borsa.am

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում իրականացվելու է Ավտոբուս ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ 19 հաս օգտագործված, 2005 թ. արտադրության, ՊԱԶ-32054 մակնիշի ավտոբուսների աճուրդային վաճառf:

Աճուրդները ս.թ. հոկտեմբերի 20 եւ 25-ին՝ փակ աճուրդով (կազմակերպության աշխատակիցների մասնակցությամբ) ժամը 12.00, այնուհետեւ ս.թ. հոկտեմբերի 26-ից բաց աճուրդով՝ յուրաքանչյուր աշխ. օր ժ.12.00, f. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբրողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել www.borsa.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝14.10.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: